# ՏԵՂԵԿԱՆՔ

## 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2010-2012 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԹՄՐԱՄՈԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐՈՎ ԵՎ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| NN п/կ | Միջոցառման անվանումը | Կատարված աշխատանքների մասին |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| | | 1. Թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտը կանոնակարգող՝ Հայաստանի Հանրապետության ներպետական իրավական ակտերի կատարելագործումը եվ դրանց ներդաշնակեցումը միջազգային պայմանագրերին |
| | | Նպատակ 1. Հայաստանի Հանրապետության ներպետական իրավական ակտերի կատարելագործումը եվ դրանց ներդաշնակեցումը միջազգային պայմանագրերին |
| 1.1.1. | Հայաստանի Հանրապետութ-յան՝ համապատասխան ոլորտի միջազգային պայմանագրերի, այդ թվում՝ Միավորված | **ՀՀ առողջապահության նախարարություն**<br>1.1.1 կետի կապակցությամբ՝ վերլուծվել և դրա արդյունքների հիման վրա ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարության կողմից ընդունվել են՝<br>ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՊՐԵԿՈՒՐՍՈՐՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ /18 մարտի 2010 թվականի N 270-Ն/<br>ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՄ ՀՈԳԵՄԵՏ ՆՅՈՒԹԵՐԻ ԿԱՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ |

| | | |
|---|---|---|
| | ազգերի կազմակերպության կոնվենցիաների դրույթների վերլուծության իրականացում և Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում դրանց առավել ամբողջական իրացման ապահովում | **ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԾ՝ ԴՐԱՆՑ ՊՐԵԿՈՒՐՍՈՐՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ԱՐՏԱՀԱՆՄԱՆ, ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԿԱՄ ՄԵԾԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ ԵՎ ԱՅԴ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ** / 18 մարտի 2011 թվականի N 281-Ն/<br>**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-Ի N 867 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ/** 18 մարտի 2011 թվականի N 281-Ն/:<br>Ուղարկվել է ՀՀ Արտաքին կապերի նախարարուփթյուն ՄԱԿ-ի երեք կոնվենցիաների հայերեն թարգմանությունների ՀՀ առողջապահության նախարարության կողմից առաջարկվող փոփոխությունները:<br>Պատասխանը ստանալուց հետո կիրականացվի նշված կոնվենցիաների դրույթների վերլուծություն և  Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում դրանց առավել ամբողջական իրացման ապահովում: |
| | | **ՀՀ արդարադատության նախարարություն** |
| | | **ՀՀ ոստիկանություն**<br>Մշակվել, շահագրգիռ գերատեսչությունների հետ համաձայնեցվել և իրավական փորձաքննության է ներկայացվել <<Թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին>> կոնվենցիայով նախատեսված իրավասու մարմին նշանակելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որն ընդունվել է ՀՀ կառավարության 2011թ. ապրիլի 21-ի թիվ 484-Ն որոշմամբ: |

| | | |
|---|---|---|
| | | ՈՒսումնասիրվել են նաև ՀՀ կառավարության 2003թ. օգոստոսի 21-ի <<Հայաստանի Հանրապետությունում հսկման ենթակա թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների կազմը /ցանկը/ հաստատելու մասին>> թիվ 1129-Ն որոշման հավելվածի 4 ցուցակը /պրեկուրսորների, որոնց շրջանառությունը Հայաստանի Հանրապետությունում սահմանափակ է և որոնց նկատմամբ սահմանված են հսկման եղանակներ/ և ՄԱԿ-ի 1988թ. կոնվենցիայի /թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին/ 1-ին և 2-րդ ցուցակներով նախատեսված նյութերը: Հիմք ընդունելով ՄԱԿ-ի 1961թ., 1971թ. և 1988թ. կոնվենցիաների պահանջները և համեմատելով նշված ցուցակներում ընդգրկված նյութերի անվանումները, ի հայտ են եկել որոշ անհամապատասխանություններ՝ նյութերի անվանումների և համապատասխան ցանկում ընդգրկված լինելու առումով:<br>Նշված անհամապատասխանությունները վերացնելու նպատակով նախապատրաստվել, շահագրգիռ գերատեսչությունների հետ համաձայնեցվել և ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 1254-Ն որոշմամբ փոփոխություններ են կատարվել ***2003 թվականի օգոստոսի 21-ի թիվ 1129-Ն որոշման մեջ***, որի նպատակն էր ՀՀ-ում սահմանափակ շրջանառությամբ և հսկման ենթակա պրեկուրսորների ցանկը համապատասխանեցնել «Թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի անօրինական շրջանառության դեմ պայքարի մասինե ՄԱԿ-ի 1988 թվականի դեկտեմբերի 19-ի կոնվենցիային: |
| | | **ՀՀ դատախազություն** |

| | | |
|---|---|---|
| | | |
| | | **ՀՀ դատական դեպարտամենտ**<br>ՀՀ-ում 2006-2010թթ. վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ առկա է թմրամոլության աճի տենդենց: Եթե 2006թ. առաջին կիսամյակում պաշտոնական վիճակագրական տվյալներով ՀՀ-ում արձանագրվել է թմրամոլության 477 (չորս հարյուր յոթանասունյոթ) դեպք, որից 279 (երկու հարյուր յոթանասունինը) կապված թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ, ապա 2010թ. առաջին կիսամյակում ՀՀ-ում արձանագրվել է թմրամոլության 811 (ութ հարյուր տասնմեկ) դեպք, որից 809 (ութ հարյուր ինը) կապված թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ: Եվ նման վիճակագրությունն առկա է այն պայմաններում, երբ ՀՀ-ում *26.05.08թ. ՀՀ քրեական օրենսգրքի 271-րդ հոդվածը (Թմրամիջոցներ գործածելը) ուժը կորցրած ճանաչվեց՝ տեղափոխվելով վարչաիրավական պատասխանատվության դաշտ: Սույն վիճակագրությունը խոսում է այն մասին, որ ՀՀ-ում նկատվում է հենց թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների աճ, քանի որ պարզ է, որ 2006թ. վիճակագրական տվյալների մեջ ներառված վիճակագրական տվյալների մի զգալի մասը հանդիսացել է հենց թմրամիջոցներ գործածելը:*<br>1. ՀՀ-ում թմրամոլության և թմրամիջոցային հանցավորության դեմ պայքարը ներպետական օրենսդրության շրջանակներում իրականցվում է ՀՀ քրեական օրեսգրքի, ՎԻՎՕ-ի, «Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մասին» ՀՀ օրենքի հիման վրա: Թմրամոլության և թմրամիջոցային հանցավորության դեմ պայքարում առաջնային տեղ ունեն Վիեննայի 1961, |

| | | |
|---|---|---|
| | | 1971թ. և ՄԱԿ-ի 1988թ. կոնվենցիանները, որոնցում ամրագրված սկզբունքները, դրույթները պարտադիր են անդամ պետությունների համար, հետևաբար՝ ներպետական օրենսդրության համապատասխան նորմերը պետք է չհակասեն այդ սկզբունքերին և դրույթներին:<br>Թեև թմրամոլության դեմ պայքարում ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան դրույթները չեն հակասում կոնվենցիայի պահանջներին, այնուամենայնիվ դրանցում առկա են ուշադրության արժանի խնդիրներ:<br>Հատկապես այստեղ խնդիր կա թմրամոլության դեմ պայքարի քաղաքականության կազմակերպման գործում: Ինչպես հայտնի է թմրամոլությունը հիվանդություն է, որի առաջացման պատճառները ոչ այնքան կենսաբանական, որքան սոցիալական բնույթ են կրում և դա պահանջում է երկարատև, հաջորդական ու անընդհատ բուժում: Ուստի, Թմրամոլությունից ազատվելու միակ ուղին դրա բուժումն է: 26.08.2008թ. ՀՀ քրեական օրենսգրիքի 271-րդ հոդվածը ապաքրեականացվեց, որը պատասխանատվություն էր նախատեսում թմրանյութ գործածելու համար տուգանքի և ազատազրկման ձևով, և դրա համար նախատեսվեց վարչական տույժ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև չորս հարյուրապատիկի չափով: Ճիշտ է դա առաջընթաց քայլ էր, քանի որ դժվար թե ազատազրկման դատապարտելը կամ որոշակի տուգանք նշանակելը անձին հետ կպահեր հետագայում կրկին թմրանյութ գործածելուց, սակայն՝ ըստ էության այս խնդիրը չի լուծում նաև ՎԻՎՕ-ն, քանի որ, եթե հաշվի առնենք սույն օրենսգրքի 22-րդ հոդվածով նախատեսված վարչական տույժի նպատակները (իրավախախտում կատարող անձի դաստիարակումը, նոր իրավախախտումը կանխելը), |

| | | |
|---|---|---|
| | | ապա կարծում ենք, որ եթե պարբերաբար թմրանյութ օգտագործող անձին ենթարկենք, ասենք, նվազագույն աշխատավարձի երկու հարյուրապատիկի չափով տույժի, դա կարող է ոչ թե նրան հետ պահել թմրանյութ գործածելուց, այլ ընդհակառակը՝ գցելով նրան ծանր նյութական դրության մեջ՝ կստիպի նրան գումար ձեռք բերելու համար<br><br>կատարել հանցագործություններ: Ուստի կարծում ենք, որ անհրաժեշտ է թմրամոլների համար օրենսդրական մակարդակով նախատեսել ոչ միայն պարտադիր անվճար բուժում թմրամոլությունից, այլ նաև ստեղծել համապատասխան ծառայություններ (որոշ արտասահմանյան երկներում գործում են պրոբացիոն ծառայություններ), որոնք հետևողականորեն կվերահսկեն այդ անձանց բուժման ընթացքը, ինչպես նաև բուժման համար նրանց վրա դրված պարտականությունների կատարմանը: Այսպիսով, հաշվի առնելով նաև վերոգրյալը, առաջարկում ենք ՀՀ-ում վերացնել թմրամոլության հաղթահարմանն ուղղված պատժողական պետական քաղաքականությունը՝ փոխարինելով այն թմրամոլության կանխարգելման, բուժման և ռեաբիլիտացիայի համապետական ծրագրերի հետևողական իրականացմամբ, որն իրենում կներառի կառուցվածքային, կադրային, ֆինանսական և սոցիալական համալիր միջոցառումներ:<br>2. ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 6-րդ մասում նախատեսվում է խրախուսական նորմ, որի համաձայն՝ թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր կամովին հանձնող անձն ազատվում է թմրամիջոցներ, հոգեմետ |

| | | |
|---|---|---|
| | | նյութեր ապօրինի պատրաստելու, վերամշակելու, ձեռք բերելու, պահելու, փոխադրելու կամ առաքելու կամ դրանք ապօրինի իրացնելու համար նախատեսված պատասխանատվությունից: Կարծում ենք, կարելի է պատասխանատվությունից ազատել ոչ միայն թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր, այլ նաև դրանց պրեկուրսորները կամովին հանձնող անձանց, քանի որ թմրամիջոցների և հոգեմետ նյութերի հետ մեկտեղ քրեական պատասխանատվություն է նախատեսված նաև դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության համար (այսինքն՝ թմրանյութերի, հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության վտանգավորությանը հավասարեցվում է դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությունը):<br>3. ՀՀ քրեական օրենսգրքի 267-րդ հոդվածը պատասխանտվություն է նախատեսում թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր, ինչպես նաև այդպիսիք պատրաստելու համար օգտագործվող և հատուկ հսկողության տակ գտնվող նյութեր, սարքավորումներ կամ գործիքներ արտադրելու, ձեռք բերելու, պահելու, հաշվառելու բաց թողնելու, փոխադրելու կամ առաքելու կանոնները խախտելու համար: Կարծում ենք՝ վերը նշված կանոները խախտելու ձևերը, եղանակները սահմանափակ են, և անհրաժեշտ է պատասխանատվություն սահմանել նաև... **վերամշակման, իրացման, վաճառքի, բաշխման, օգտագործման կանոնների խախտման համար:**<br>4. 1971 թվականի կոնվենցիայով սահմանվում է, որ հոգեմետ նյութերի գովազդն արգելվում է: Այս պահանջն իր ամրագրումն է ստացել նաև «Թմրանյութերի և հոգմետ նյութերի մասին» ՀՀ օրենքում, որի 42-րդ և 43-րդ հոդվածներում սահմանված է, որ արգելվում է ինչպես թմանյութերի, |

| | | |
|---|---|---|
| | | հոգեմետ նյութերի կամ դրանց պրեկուրսորների քարոզչությունը, գովազդը, այնպես էլ դրանց վերաբերյալ գրականություն հրապարակելը զանգվածային լրատվական միջոցներով, համակարգչային ցանցերով, ինչպես նաև դրանց արտադրման, մշակման, վերամշակման ձևերի, մեթոդների, եղանակների վերաբերյալ տեղեկատվության որոնումը, հավաքումը, տրամադրումը եւ տարածումը, ինչպես նաեւ այդ կապակցությամբ խորհրդատվությունը, մինչդեռ ոչ վարչական, ոչ էլ քրեական օրենսդրությամբ նշված դրույթները չեն ամրագրվել, և այդ արարքների համար չկան պատասխանտվություն սահմանող նորմեր: Հետևաբար՝ հաշվի առնելով այդ արաքների հանրային վտանգավորությունը, մասնավորապես այն հագամանքը, որ ներկայիս տեխնոլոգիական առաջընթացների պայմաններում յուրաքանչյուր անչափահասի անհրաժեշտ է ընդհամենը մի քանի րոպե որպեսզի ինտերնետում որոնման միջոցով մանրամասն ինֆորմացիա ձեռք բերի թմրամիջոցների, հոգեմոտ նյութերի, դրանց իրացման վայրերի, գների մասին, կարծում ենք՝ այդ արաքների համար պատասխանտվություն պետք է նախատեսել վարչական կամ քրեական օրենսդրությամբ:<br>*6. Արտասահմանյան երկրների մեծ մասի քրեական օրենսդրությունը պարունակում է նորմեր, որոնք կոչված են հակազդելու թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց հավասարեցված այլ նյութերի շրջանառությանը: Այսպես օրինակ,* ԳՖՀ *քրեական* օրենսդրությամբ, անձինք, ովքեր թմրամիջոցներ են օգտագործում ոչ մեծ չափաբաժիններով, քրեական օրենսդրությամբ չեն հետապնդվում, նույն կանոնն է կիրառվում նաև այն անձանց նկատմամբ, ովքեր թմրամիջոցներ, հոգեմետ նյութեր պատրաստել, վերամշակել, ձեռք բերել, |

| | | |
|---|---|---|
| | | պահել, փոխադրել կամ առաքել են ոչ մեծ չափերով՝ անձնական օգտագործման համար։<br>Դեռ ավելին, մեծամասամբ անձինք, ովքեր ունեն կախվածություն թմրամիջոցներից և հոգեմետ նյութերից և հանցագործություն են կատարել դրանց ազդեցության տակ և նշված հանցագործության համար սահմանված է քրեական պատասխանատվություն՝ ազատազրկման ձևով ոչ ավելի քան երկու տարի ժամկետով՝ տեղափոխվում են ռեաբիլիտացիոն հաստատություններ՝ պատիժ կրելու փոխարեն՝ այնտեղ իսկ ենթարկվելով հարկադիր բուժման թմրամոլությունից։<br>Թուրքիայի քրեական օրենսգիրքը քրեական պատասխանատվություն է նախատեսում թմրամիջոցների և թունավոր նյութերի ապօրինի շրջանառության համար երկրի քրեական օրենսգրքի երրորդ գլխում (հասարակության առողջության ու սննդի մասին)։ Գլուխը բաղկացած է յոթ նորմից։ Ըստ նորմերի բովանդակության վերջիններս կարելի է բաժանել հինգ խմբերի.<br>1. Հանցագործություններ, որոնք անմիջականորեն կապված են թմրանյութերի ապօրինի շրջանառության հետ (403-րդ հոդված), որով պատասխանատվություն է նախատեսվում թմրամիջոցների ապօրինի վերամշակման, երկիր ներկրելու, երկրից արտահանելու, իրացնելու կամ իրացնելու առաջարկ անելու, ձեռք բերելու, պահելու, անվճար հանձնելու կամ ստանալու, տեղափոխելու, կամ առուվաճառքում և հանձնում-ընդունման պրոցեսում որպես միջնորդ հանդիսանալու և թմրանյութեր պատրաստելու համար։ Այս խումբ հանցագործությունների համար նախատեսված է առավելագույն պատիժ մինչև 20 (քսան) տարի ժամկետով ազատազրկում, իսկ եթե այդ հանցագործության կատարման |

| | | |
|---|---|---|
| | | պրոցեսում ներգրավվել է նաև 18 տարին չլրացած անձի կամ անգործունակ անձի, ապա պատասխանատվությունը ավելանում է մինչև պատժի 1/6-ի չափով:<br>2. Հանցագործությունների այս խմբի մեջ ներառված են այն հանցագործությունները, որոնք ունեն հատուկ սուբյեկտ (քր. օր-ի 406-րդ հոդված), իսկ ավելի ստույգ, այս հանցագործությունների սուբյեկտ կարող է լինել միայն բժիշկը, անասնաբույժը, դեղագործը, քիմիկոսը, դեղատան սեփականատերը կամ մենեջերը, առողջապահության ոլորտում աշխատող պաշտոնատար անձինք, մանկաբարձը, բուժքույրը կամ սանիտարը: Թուրքիայի քրեական օրենսգրքի 403-րդ կամ 404-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություններ կատարելիս հիշյալ անձանց նկատմամբ վերոնշյալ հոդվածներով նախատեսված պատժատեսակը կրկնապատկվում է, իսկ վերջիններս ցմահ զրկվում են մասնագիտական գործունեությամբ զբաղվելու իրավունքից կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից:<br>3. Հանցագործություններ (քր. օր-ի 407-րդ հոդված), որոնց արդյունքում մարդու առողջությանը պատճառվել է վնաս կամ վերջինս զրկվել է կյանքից՝ կապված թմրանյութերի ապօրինի շրջանառության հետ:<br>4. Նորմերի չորրորդ խումբը նախատեսում է հանցակիցներին քրեական պատասխանատվությունից ազատելու կարգը (քր. օր-ի 405-րդ հոդված) և թմրամիջոցներ օգտագործելու համար ստեղծված որջերում առգրավման կազմակերպման կարգը (քր. օր-ի 408-րդ հոդված):<br>5. Հանցագործություններ, որոնք կապված են թունավոր նյութերի իրացնելու հետ (քր. օր-ի 409-րդ հոդված), որոնց համար պատասխանատվություն է նախատեսվում ազատազրկման տեսքով 15 |

| | | |
|---|---|---|
| | | օրից մինչև երկու տարի ժամկետով՝ ծանր դրամական տուգանքով՝ տասնհինգից մինչև հարյուր լիրայի չափով և իրացնելու համար նախատեսված առարկաների առգրավմամբ: ՌԴ օրենսդիրը թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործություններն ներառված են ՌԴ քրեական օրենսգրքի 25-րդ գլխում, որը վերնագրված է «Բնակչության առողջության և հասարակական գիտակցության դեմ ուղղված հանցագործություններ» վերնագրով: Թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը նվիրված հանցագործությունների շրջանակը ՌԴ-ում գրեթե նույնն է, ինչ ՀՀ-ում, այն տարբերությամբ, որ ՌԴ-ում համամատաբար ընդլայնված է հանցագործությունների առարկան, այսպես, եթե ՀՀ-ում թմրամիջոցների ապօրին շրջանառության առարկան օրենսդիրը սահմանափակել է վերջիններիս թվին դասելով միայն թմրամիջոցները, հոգեմետ նյութերը և դրանց պրեկուրսորները, ապա ՌԴ քրեական օրենսգրքով հանցագործության առարկայի մեջ ներառված է նաև թմրամիջոցների և հոգեմետ նյութերի անալոգները և բույսերը, որոնք պարունակում են թմրեցնող նյութեր և հոգեմետ նյութեր: Գտնում ենք, որ ՌԴ օրենսդրի կողմից հանցագործության առարկայի շրջանակն շատ առավել հստակ է, իսկ մեր օրենսդիրը նախատեսելով պրեկուրսորները որպես հանցագործության առարկա՝ արհեստականորեն լայնացրել է սույն հանցագործության առարկայի շրջանակը: Խնդիրը կայանում է նրանում, որ ՀՀ-ում դեղատներում ազատ վաճառքում են գտնվում մի շարք դեղամիջոցներ (օրինակ՝ սենադեքսին), որոնք ընկնում են ո՛չ թմրամիջոցների, ո՛չ հոգեմետ նյութերի կատեգորիաների տակ, սակայն իրենց մեջ պարունակում են թմրամիջոցների պրեկուրսորներ: Ստացվում |

| | | |
|---|---|---|
| | | է մի իրավիճակ, որ եթե անձը ազատ վաճառքում ձեռք բերի նշված պրեկուրսորներ պարունակող դեղերից որևէ մեկը և հետագահում ցանկանա իրացնել այլ անձի՝ տեսականորեն թույլ տալով օրենքի պահանջների խախտում, այսինքն կստացվի, որ անձի արարքը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի հատկանիշներին: Ավելորդ չենք համարում նշել, որ ՀՀ «թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին պարբերության մեջ տրված է թմրամիջոցի հասկացությունը, որի համաձայն թմրամիջոց է համարվում ցանկացած բնական կամ սինթետիկ ծագում ունեցող նյութեր, դրանց պատրաստուկներ, բույսեր, որոնք Հայաստանի Հանրապետության օրենսդրության և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի, այդ թվում՝ ՄԱԿ-ի 1961 թվականի «Թմրամիջոցների մասինե միասնական կոնվենցիայի համաձայն՝ ներառված են Հայաստանի Հանրապետությունում հսկման ենթակա թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ցանկում: Օրենսդրի նման բնորոշումից ակնհայտ է, որ վերոնշյալ օրենքը շատ ավելի լայն է մեկնաբանում «թմրամիջոց» կատեգորիան՝ դրա մեջ մտցնելով ոչ միայն օգտագործման համար պատրաստի թմրամիջոցը, այլև դրանց բույսերը: Հարց է առաջանում, թե անձին ՀՀ քր. օր-ի օրինակ 266-րդ հոդվածով մեղադրանք առաջադրելիս ինչը պետք է դիտել որպես թմրամիջոց: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ մասն արգելում է քրեական օրենսդրությունում անալոգիայի կիրառումը, ուստի գտնում եմ, որ քրեական հետապնդում իրականացնող մարմինը լրիվ իրավասու է հիմք չընդունելու ՀՀ «թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի |

| | | |
|---|---|---|
| | | մասին» օրենքում ներառված հասկացությունը որպես՝ թմրամիջոցի հասկացություն և որպես քրեաիրավական կատեգորիա թմրամիջոցի կատեգորիայի տակ ներառվում են միայն այն թմրամիջոցները, որոնց ցանկը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքին կից N 1 հավելվածով: ԵՎ քանի որ այս հավելվածի մեջ թմրեցնող նյութեր պարունակող բույսերը չեն ներառված որպես թմրամիջոց և առանձին էլ նախատեսված չեն ՀՀ քր. օր-ի թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը նվիրված հոդվածների առարկայի մեջ, ուստի թմրեցնող նյութեր պարունակող բույսերի ապօրինի շրջանառության համար՝ իրացնելու նպատակով, անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության: Հենց այս մտավախությամբ է պայմանավորված եղել ՌԴ օրենսդրի դիրքորոշումը, որ վերջինս առանձին հանցագործության առարկա է համարել ոչ միայն թմրամիջոցը, այլև բույսերը, որոնք իրենց մեջ պարունակում են թմրեցնող նյութեր: Բացի այդ, ՌԴ քրեական օրենսգրքի՝ իրացնելու նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը նվիրված հոդվածի (ՌԴ քրեական օրենսգրքի 228.1-րդ հոդված) 3-րդ մասի «Չ» կետում նախատեսել է մի շատ կարևոր հանցակազմը որակյալ դարձնող հանգամանք, այն է՝ հանցագործությունը, որը կատարվել է 18 տարին լրացած անձի կողմից՝ անչափահասի նկատմամբ: Նման կետի նախատեսումը որպես ծանրացնող հանգամանք խոսում է այն մասին որ ՌԴ օրենսդիրը փորձել է պրեվենտիվ միջոց կիրառել՝ հնարավորինս բացառելով անչափահաս անձանց թմրամիջոցների վաճառքի իրականացումը: ՀՀ քրեական օրենսգրքում թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործություննններում նման կետ նախատեսված չէ, այսինքն, անձը, ով թմրամիջոց կիրացնի |

| | | |
|---|---|---|
| | | անչափահասին պատասխանատվության է ենթակա ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի առաջին մասով: Այսպիսով ամփոփելով վերոշարադրյալը, գտնում ենք, որ ՀՀ քրեական օրենսգիրքը թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը նվիրված հոդվածների մասով կարիք ունի որոշակի փոփոխությունների և լրացումների, որոնք, մասնավորապես, հանգում են հետևյալին. 1. ՀՀ քրեական օրենսգրքի թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների առարկան լրացնել՝ «թմրեցնող նյութեր պարունակող բույսեր» բառերով: 2. ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել առաձին կետով, որը քրեական պատասխանատվություն կսահմանի 18 տարին լրացած անձի կողմից՝ անչափահասին թմրամիջոց իրացնելու համար՝ հետևյալ բովանդակությամբ. «Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված հանցագործությունները, որոնք կատարվել են 18 տարին լրացած անձի կողմից՝ անչափահասի նկատմամբ»: 3. ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի վերջում ավելացնել առանձին պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ. «Եթե անձը կատարել է սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարք՝ թմրամիջոցի անձնական օգտագործման նպատակով, ապա ենթակա չէ քրեական պատասխանատվության: Նշված անձանց նկատմամբ կիրառվում է թմրամիջոցներից հարկադիր բուժում»: 4. Թուրքիայի քրեական օրենսգրքի օրինակով անհրաժեշտ է քրեական օրենսգրքում կատարել հետևյալ լրացումները. ա/ պատասխանատվություն սահմանել՝ թմրամիջոցների ապօրինի վերամշակման, երկիր ներկրելու, երկրից արտահանելու, իրացնելու կամ |

| | | |
|---|---|---|
| | | իրացնելու առաջարկ անելու, ձեռք բերելու, պահելու, անվճար հանձնելու կամ ստանալու, տեղափոխելու, կամ առուվաճառքում և հանձնում-ընդունման պրոցեսում **որպես միջնորդ հանդիսանալու համար.**<br>բ/ սահմանել պատասխանատվություն հատուկ սուբյեկտի կողմից կատարելու համար, մասնավորապես՝ բժշկի, անասնաբույժի, դեղագործի, քիմիկոսի, դեղատան սեփականատերի կամ մենեջերի, առողջապահության ոլորտում աշխատող պաշտոնատար անձանց, մանկաբարձի, բուժքույրի կամ սանիտարի: |
| **1.1.2.** | Թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտը կանոնակարգող՝ Հայաստանի Հանրապետության ներպետական իրավական ակտերի համակարգային վերլուծության | **ՀՀ առողջապահության նախարարություն**<br>Միջոցառումների ցանկի 1.1.1-րդ, 1.1.2-րդ և 1.2.1-րդ կետերի վերաբերյալ նաև՝ «Հայաստանի Հանրապետության՝ համապատասխան ոլորտի միջազգային պայմանագրերի, այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիաների դրույթների վերլուծության իրականացման, թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքար ոլորտ կանոնակարգող՝ ՀՀ ներպետական իրավական ակտեի համակարգային վերլուծության իրականացման և անհրաժեշտության դեպքում առաջարկությունների ներկայացման, ինչպես նաև ՀՀ միջազգային պայմանագրերի և ներպետական իրավական ակտերի՝ թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարին ռռնչվող դրույթների կիրառման պրակտիկայի վերլուծույան վերաբերյալ, հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարության համապատասխան մասնագետների կողմից ուսումնասիրվել է Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության դեմ պայքարի ոլորտը կանոնակարգող հիմնական ներպետական |

| | | |
|---|---|---|
| | իրականացում և անհրաժեշտությ ան դեպքում դրանցում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել | իրավական ակտը՝ 2002 թվականի դեկտեմբերի 26-ին ընդունված «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքը: Բացի սույն օրենքից տվյալ ոլորտը կանոնակարգելու նկատառումով ուսումնասիրվել են նաև կառավարության մի շարք որոշումներ: Դրանք են՝<br>1) 2010 թվականի մարտի 18-ի N 270-Ն որոշումը՝ «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության կանոնները սահմանելու մասին»,<br>2) 2003 թվականի օգոստոսի 21-ի N 1129-Ն որոշումը՝«ՀՀ-ում հսկման ենթակա թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների կազմը (ցանկը) հաստատելու մասին»,<br>3) 2011 թվականի մարտի 18-ի «Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ ՀՀ կառավարության սահմանած՝ դրանց պրեկուրսորների արտադրության, արտահանման, ներմուծման կամ մեծածախ առևտրի իրականացման լիցենզավորման կարգերը և այդ գործունեության իրականացման լիցենզիայի ձևերը հաստատելու մասին» N 281-Ն որոշումը,<br>4) 1994 թվականի փետրվարի 14-ի N 76 որոշումը՝ «Թմրաբիզնեսի և թմրամոլության դեմ պայքարն ուժեղացնելու միջոցառումների և անչափահասների հետ տարվող աշխատանքների պետական միջգերատեսչական հանձնաժողովի կանոնադրությունը հաստատելու մասին»:<br>Հարկ է նշել, որ 2011 թվականին ընդունվեց ՀՀ կառավարության N 240-Ն որոշումը, որով փոփոխություններ և լրացումներ կատարվեցին 2010 թվականի մարտի 18-ի N 270-Ն որոշման մեջ, ինչպես նաև 2006 թվականի |

| | | |
|---|---|---|
| | | հուլիսի 27-ին ընդունված N 1046-Ն որոշումը, որով փոփոխությունններ և լրացումներ կատարվեցին N 1299-Ն որոշման մեջ: <br> Համապատասխանաբար ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 18-ի N 260-Ն որոշմամբ ուժը կորցրած ճանաչվեցին կառավարության N 376-Ն և N 781-Ն որոշումները: <br> Բացի վերը նշված ակտերից 2007 թվականի հունվարի 19-ին ընդունվեց ՀՀ առողջապահության նախարարի N 59-Ն հրամանը՝ «Թմրամիջոցների կամ հոգեներգործուն (հոգեմետ) նյութերի մանր, խոշոր, առանձնապես խոշոր չափեր սահմանելու մասին»: <br> Սույն ոլորտի կարգավորմանն են ուղղված ՀՀ քրեական օրենսգրքի 266-276-րդ հոդվածները և որոշ հոդվածներ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքից: <br> Ինչ վերաբերում է միջազգային իրավական ակտերին, ապա հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է ՄԱԿ-ի 1961 թվականի «Թմրամիջոցների մասին» միասնական կոնվենցիայի, 1971 թվականի «Հոգեներգործուն նյութերի մասին» կոնվենցիայի, ինչպես նաև 1988 թվականի «Թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին» կոնվենցիայի մասնակից: <br> 1961 թվականի միասնական կոնվենցիան սահմանում է, որ թմրամիջոցների դեմ արդյունավետ պայքարը պահանջում է միջազգային համաձայնեցված միջոցառումներ: Այս կոնվենցիայի ընդունումից հետո բոլոր նախորդ կոնվենցիաները համարվել են ուժը կորցրած: <br> 1971 թվականի կոնվենցիայի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ 1961 թվականի միասնական կոնվենցիան վերաբերում էր միայն թմրամիջոցներին, իսկ 1971 թվականի կոնվենցիան |

| | | |
|---|---|---|
| | | վերաբերում է հոգեմետ նյութերին: Իսկ 1981 թվականի կոնվենցիայով սահմանվեցին թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ արդյունավետ պայքարի սկզբունքները և հիմնական հասկացությունները:<br><br>Ուսումնասիրության արդյունքում ձևավորվել են մի շարք առաջարկություններ, այն է՝<br>1.«Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասինե ՀՀ օրենքի 3-րդ հոդվածին: Սույն հոդվածի 3-րդ մասով թմրամիջոցները, հոգեմետ նյութերը, պրեկուրսորները բնութագրվում են որպես նյութեր, որոնք օգտագործվում են թմրամիջոցներ և հոգեմետ նյութեր ստանալիս, արտադրելիս, պատրաստելիս, վերամշակելիս, և որոնք ներառված են հսկման ենթակա թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ցանկում: Նույն հոդվածի 6-րդ կետում թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությունը բնութագրվում է որպես դրանց՝ ՀՀ օրենսդրության խախտումներով իրականացվող շրջանառություն:<br>Այս կապակցությամբ հարկ է անդրադառնալ ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան դրույթներին:<br>ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածը վերնագրված է «Թմրամիջոցների, հոգեներգործուն նյութերի, դրանց համարժեքների և պրեկուրսորների ապօրինի շրջանառությունը իրացնելու նպատակով: Հոդվածի դիսպոզիցիայում որպես քրեորեն հետապնդելի արարք նախատեսված է ՝<br>1) իրացնելու նպատակով թմրամիջոցներ, հոգեներգործուն նյութեր |

| | | |
|---|---|---|
| | | ապօրինի պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը, առաքելը, կամ<br>2) դրանք ապօրինի իրացնելը:<br>ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածն էլ պատասխանատվություն է սահմանում առանց իրացնելու նպատակի թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ապօրինի շրջանառության համար:<br>Այսինքն ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ և 268-րդ հոդվածների վերնագրերում և դիսպոզիցիաներում որպես ապօրինի գործողություն ներառված չէ արտադրելը: Մինչդեռ ՄԱԿ-ի 1961 թվականի «Թմրամիջոցների մասին» միասնական կոնվենցիայի համաձայն «պատրաստում» նշանակում է բոլոր այն գործընթացները՝ բացառությամբ արտադրության գործընթացների, որոնց արդյունքում կարող են ստացվել թմրամիջոցներ: Իսկ ՄԱԿ-ի 1971 թվականի «Հոգեներգործուն նյութերի» մասին կոնվենցիայի համաձայն «արտադրություն» նշանակում է բոլոր այն գործընթացները, որոնց միջոցով կարող են հոգեներգործուն նյութեր ստացվել:<br>Այս ամենից բխում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ և 268-րդ հոդվածների դիսպոզիցիաներում անհրաժեշտ է կատարել համապատասխան փոփոխություններ, ինչի արդյունքում կքրեականացվի թմրամիջոցների, հոգեներգործուն նյութերի, դրանց պրեկուրսորների և համարժեքների ապօրինի արտադրությունը:<br>2. ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածը վերնագրված է «Թմրամիջոցների, հոգեներգործուն նյութերի, դրանց համարժեքների և պրեկուրսորների ապօրինի շրջանառությունն իրացնելու նպատակով»: Իսկ հոդվածի դիսպոզիցիայում որպես քրեորեն հետապնդելի արարք |

| | | |
|---|---|---|
| | | դիտարկվում է միայն թմրամիջոցների, հոգեներգործուն նյութերի ապօրինի իրացումը կամ իրացնելու նպատակով դրանք պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը, առաքելը: <br> Այսինքն ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի վերնագրում օգտագործված են «համարժեքներէ, «պրեկուրսորներէ եզրույթները, սակայն հոդվածի դիսպոզիցիայում դրանք ներառված չեն, ուստի և «համարժեքներէ-ի և «պրեկուրսորներէ-ի հետ կապված գործողությունների կամ անգործության համար պատասխանատվություն սահմանված չէ: Վերը նշվածից բխում է , որ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածում անհրաժեշտ է կատարել լրացումներ, ինչի արդյունքում կքրեականացվեն «համարժեքներէ-ի և «պրեկուրսորներէ-ի հետ կապված ապօրինի արարքները: <br> 3. ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 4-րդ մասը պատասխանատվություն է սահմանում թմրամիջոցներ կամ հոգեներգործուն նյութեր պատրաստելու նպատակով պրեկուրսորներ ապօրինի պատրաստելու, վերամշակելու, ձեռք բերելու, պահելու, փոխադրելու, առաքելու կամ դրանք ապօրինի իրացնելու համար: <br> Նույն հոդվածի 6-րդ մասը նախատեսում է խրախուսական նորմ, համաձայն որի թմրամիջոցներ համ հոգեներգործուն նյութեր կամովին հանձնող անձը ազատվում է դրանք պատրաստելու, վերամշակելու, ձեռք բերելու, պահելու, փոխադրելու կամ առաքելու համար նախատեսված քրեական պատասխանատվությունից: Այսինքն վերը նշված խրախուսական նորմը չի տարածվում 266-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հանցակազմի վրա: <br> Պարզ չէ, թե ինչու է հետևյալ խրախուսական նորմի գործողությունը |

| | | |
|---|---|---|
| | | տարածվում միայն թմրամիջոցներ կամ հոգեներգործուն նյութեր կամովին հանձնելու դեպքերի վրա և այդ նորմի տարածման հնարավորությունը բացառվում պրեկուրսորները կամովին հանձնելու դեպքերում: Ուստի առաջարկում ենք կատարել համապատասխան փոփոխություններ, ինչի արդյունքում վերը նշված խրախուսական նորմի գործողությունը կտարածվի նաև պրեկուրսորները կամովին հանձնելու դեպքերի վրա:<br>4. Հարկ է նշել, որ «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասինե ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում տրվում են միայն «թմրամիջոցներե «հոգեմետ (հոգեներգործուն )նյութերե, «պրեկուրսորներե և «պատրաստուկներե հասկացությունները, մինչդեռ ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում թմրանյութեր, հոգեներգործուն, խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր ապօրինի ցանելու կամ աճեցնելու համար: Այսինք սույն հոդվածում օգտագործվում է «թմրանյութե եզրույթը, որի վերաբերյալ չկա և ոչ մի իրավական ակտ, ինչի միջոցով կպարզաբանվեր տվյալ եզրույթի բովանդակությունը: Ուստի առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածում օգտագործված «թմրանյութե եզրույթը փոխարինել «թմրամիջոցե եզրույթով:<br>Վերը նշված բոլոր առաջարկները նաև պայմանավորված են «Թմրամիջոցների և հոգեմետ(հոգեներգործուն) նյութերի մասինե ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պահանջով, որը, որպես թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառության և ապօրինի շրջանառության կանխարգելման բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներ սահմանում է ՝ |

| | | |
|---|---|---|
| | | 1)թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության համար պատժելիությունը, պատասխանատվությունը և դրանց անխուսափելիությունը,<br>2)թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության հետ կապված թմրամոլության և իրավախախտումների կանխարգելման առաջնայնությունը:<br>5. Վերլուծության ընթացքում անդրադարձել ենք նաև «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածին: Վերջինիս 2-րդ մասը սահմանում է, որ թմրամիջոցների և հոգեմետ նյութերի շրջանառությունը թույլատրվում է միայն բժշկական նպատակներով, բժշկի նշանակմամբ, ինչպես նաև սույն օրենքի 31-33-րդ հոդվածներով նախատեսված նպատակներով:<br>Մինչդեռ նույն օրենքի 31-րդ և 32-րդ հոդվածները ճանաչվել են ուժը կորցրած (08.12.10 ՀՕ-233-Ն), իսկ 33-րդ հոդվածը ենթարկվել է փոփոխման՝ վերնագրվելով «օպերատիվ հետախուզական գործունեության նպատակներով թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների վերահսկվող փոխադրումները և ստուգողական գնումբ»: Ուստի առաջարկում ենք սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ.<br>«Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառությունը թույլատրվում է միայն բժշկական նպատակներով՝ բժշկի նշանակմամբ»:<br>6. «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն թմրամիջոցների, |

| | | |
|---|---|---|
| | | հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառությունը դրանց մշակումն է, արտադրությունը, պատրաստումը, վերամշակումը, մեծածախ առևտուրը, տեղափոխումը, պահումը, բացթողումը, իրացումը, ձեռքբերումը, օգտագործումը, առաքումը, բաշխումը, արտահանումը, ներմուծումը և ոչնչացումը՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան: Մինչդեռ ՀՀ կառավարության N 270-Ն որոշմամբ՝ մասնավորապես դրա առաջին մասով, որպես թմրամիջոցների հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառություն դիտարկվում է դրանց մշակումը, արտադրությունը, պատրատումը, վերամշակումը, տեղափոխումը, պահումը բացթողումը, իրացումը, ձեռքբերումը, օգտագործումը, առաքումը, բաշխումը, արտահանումը, ներմուծումը և ոչնչացումը: Այսինքն մեծածախ առևտուրը չի դիտարկվում որպես դրանց շրջանառություն, ինչը հակասում է վերը նշված օրենքի 3-րդ հոդվածին:<br>Ուստի առաջարկում ենք վերացնել սույն օրենդրական կարգավորման բացը և որպես շրջանառություն դիտարկել նաև մեծածախ առևտուրը:<br>7. «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասինե ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն արգելվում է թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների գովազդումը կամ քարոզչությունը: Նույն հոդվածում քարոզչությունը բնութագրվում է որպես ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գործունեություն՝ ուղղված թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների տարածման ձևերի, պատրաստման մեթոդների, ստացման, օգտագործման և ձեռքբերման տեղերի մասին |

| | | |
|---|---|---|
| | | տեղեկությունների տարածմանը: Ելնելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի պահանջից ստացվում է, որ թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և պրեկուրսորների վերամշակման, մշակման, պահելու, գործածելու և այլ գործողություններ կատարելու վերաբերյալ քարոզչությունը չի արգելվում, ինչն անընդունելի է:<br>Ուստի առաջարկում ենք կամ սպառիչ կերպով ներկայացնել քարոզչություն հանդիսացող տեղեկությունների տարածման ցանկը կամ սույն հոդվածում ներառել «քարոզչություն» եզրույթը` առանց այդ ցանկի սահմանման, ինչը մեր կարծիքով առավել նպատակահարմար է, քանի որ դժվար է սպառիչ կերպով այն նախատեսելը:<br>8. «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածը սահմանում է, որ թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության ընթացքում առգրավված թմրամիջոցները, հոգեմետ նյութերը և դրանց պրեկուրսորները, ինչպես նաև պատրաստման գործիքներն ու սարքավորումները բռնագրավվում են: Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ սույն հոդվածի առաջին մասում նշված թմրամիջոցները, հոգեմետ նյութերը և դրանց պրեկուրսորները , գործիքներն ու սարքավորումները, որոնց հետագա օգտագործումը բռնագրավում իրականացնող մարմինը ճանաչել է աննպատահակարմար, ոչնչացվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:<br>Նախ խնդիր է առաջանում այն հարցի կապակցությամբ, թե ինչպես է կարող բռնագրավում իրականացնող իրավասու մարմինը թմրամիջոցը, հոգեմետ նյութերը և դրանց պրեկուրսորները, գործիքներն ու սարքավորումները ճանաչել օգտագործման համար ոչ պիտանի, քանի որ |

| | | |
|---|---|---|
| | | դա պահանջում է համապատասխան ոլորտի գիտելիքներ, ինչը մեր կարծիքով կարող է հանձնարարվել օրինակ բժիշկ- նարկոլոգներին կամ համապատասխան ոլորտի փորձագետների: Ելնելով այս ամենից առաջարկում ենք խմբագրական փոփոխության ենթարկել սույն հոդվածը:<br>9. «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված են ոստիկանության, դատախազության, ազգային անվտանգության, մաքսային մարմինների և սահմանապահ ծառայությունների պաշտոնատար անձանց իրավունքները՝ դրանց շարքին դասելով նաև իրավախախտում թույլ տված անձանց գործողությունների կասեցումը: Նույն հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ վերը նշված պաշտոնատար անձինք պարտավոր են միջոցներ ձեռնարկել թմրամիջոցների, հոգեմետ նյութերի, պրեկուրսորների շրջանառության հետ կապված հայտնաբերված վարչական իրավախախտումների և հանցագործությունների կանխման և մեղավորներին պատասխանատվության ենթակելու ուղղությամբ:<br>Կարծում ենք , որ սույն հոդվածի 2-րդ և 4-րդ մասերը հակասում են միմյանց, ուստի առաջարկում ենք իրավախախտում թույլ տված անձանց գործողությունների կասեցումը դիտարկել որպես վերը նշված իրավասու մարմինների պարտականություն:<br>10.Որպես օրենսդրական կարգավորման բաց կարելի է դիտարկել նաև սույն ոլորտը համապարփակ կարգավորող իրավական ակտերի բացակայությունը: Տվյալ ոլորտը կարգավորող իրավական ակտերը արդեն թվարկվել են, մինչդեռ, հարկ է նշել, որ «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքի մի շարք |

| | | |
|---|---|---|
| | | հոդվածներում ուղղակիորեն ամրագում է ստացել համապատասխան ոլորտի հարաբերությունների կարգավորմանն  ուղղված իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը: Թվարկենք դրանցից մի քանիսը:<br>«Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ անասնապահության մեջ թմրամիջոցների և հոգեմետ նութերի օգտագործման պայմանները և կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը: Նույն օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ առանձին տեսակների մասնագիտական և առավել վտանգի աղբյուրի հետ կապված գործունեության ցանկը, որով զբաղվելու համար կատարվել են սահմանափակումներ և նշված են սույն հոդվածի առաջին մասում, սահմանում է կառավարությունը, իսկ 44-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն ապօրինի շրջանառությունից բռնագրավված թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների նմուշների հավաքածուի ստեղծման, համալրման, փոխանցման կարգը և չափաքանակները սահմանում է կառավարությունը: «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն թմրամիջոցները և հոգեմետ նյութերը ֆիզիկական անձանց բաց թողնելու կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը:<br>Նմանօրինակ բովանդակությամբ դրույթները բազմաթիվ են և ներառված են վերը նշված օրենքում: Ելնելով վերոգրյալից առաջարկում ենք հրատապ ձեռնամուխ լինել սույն ոլորտի կարգավորմանն ուղղված իրավական ակտերի մշակմանը:<br>11. «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» |

| | | |
|---|---|---|
| | | ՀՀ օրենքի 18-րդ հոդվածը սահմանում է, որ ՀՀ տարածքում թմրամիջոցների, հոգեմետ նյութերի տեղափոխման իրականացման իրավունքը վերապահված է կազմակերպություններին: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն, այդ նյութերի պահպանումն իրականացնում են դրանք տեղափոխող կազմակերպությունները: Նախ պարզ չէ, թե ինչ կազմակերպությունների մասին է խոսքը, իսկ վերը նշված օրենքի և ոչ մի դրույթ չի անդրադառնում այս խնդրի կարգավորմանը՝ ինչն էլ հանգեցնում է իրավական որոշակիության սկզբունքի խախտմանը:<br>Հարկ է նշել նաև, որ ՀՀ առողջապահության նախարարության կողմից նախատեսվում է 2012 թվականի տարեսկզբին ձևավորել աշխատանքային խումբ՝ ներգրավելով ոլորտի համապատասխան մասնագետներին՝ բարձրացված հարցերը ևս մեկ անգամ քննարկելու և առաջարկությունների հիման վրա վերջնական փաստաթուղթ ձևավորելու համար: |
| | | **ՀՀ արդարադատության նախարարություն** |
| | | **ՀՀ ոստիկանություն**<br>Նախապատրաստվել է <<**ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**>> **ՀՀ օրինագիծը,** որով ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածում կատարվող փոփոխությամբ նախատեսվում են իրացման նպատակով թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կամ ապօրինի իրացման հանցակազմը որակյալ դարձնող մասեր՝ պայմանավորված արարքը կազմակերպված խմբի կողմից, խոշոր կամ առանձնապես խոշոր չափերով կատարելու հետ: Բացի այդ, հստակ սահմանվում է, որ անձն |

| | | |
|---|---|---|
| | | ազատվելու է *միայն կամովին հանձնած նյութերի ապօրինի շրջանառության համար ՀՀ* քրեական օրենսգրքի կոնկրետ հոդվածներով նախատեսված պատասխանատվությունից, իսկ պատասխանատվությունից ազատվելու հնարավորություն նախատեսվում է նաև թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի պրեկուրսորներ կամովին հանձնող անձանց համար: Օրինագծով, միաժամանակ, սահմանվում են ապօրինի շրջանառվող պրեկուրսորների չափաքանակները, տարանջատվում նախատեսված պատասխանատվությունն ըստ այդ չափաքանակների՝ նպատակ ունենալով ապահովելու քրեական պատասխանատվության անհատականացման սկզբունքի արդյունավետ կիրառումը: Օրինագիծը 2011 թվականի դեկտեմբերի 7-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվել է երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ:<br>***<<Ոստիկանությունում ծառայության մասին>> ՀՀ օրենքում*** 2010 թվականի նոյեմբերի 15-ին կատարված լրացումների արդյունքում ոստիկանությունից ազատման համար հիմք հանդիսացող կարգապահական կոպիտ խախտում է համարվում նաև թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր օգտագործելը:<br>Ազգային Ժողովի կողմից 08.12.2011թ. ընդունվեց <<***Ոստիկանությունում ծառայության մասին>> ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքը,*** որով ոստիկանության ծառայողին ոստիկանությունից ազատման հիմք՝ կոպիտ խախտում է սահմանվել թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր օգտագործելու հանգամանքը պարզելու հետազոտության անցկացման համար անհրաժեշտ նմուշներ հանձնելու պարտականությունը |

| | | |
|---|---|---|
| | | չկատարելը: Ներկայումս ՀՀ ԱԺ –ում է գտնվում ***<<ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին>> ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրինագիծը***, որով նախատեսվում է թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր օգտագործելու հանգամանքը պարզելու հետազոտության անցկացման համար անհրաժեշտ նմուշներ հանձնելու պարտականություն ոստիկանության ծառայողների համար: |
| | | **ՀՀ դատախազություն**<br>2010-2012 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ծրագրով նախատեսված միջոցառումների շրջանակներում ՀՀ գլխավոր դատախազությունը որոշակի դրական աշխատանքներ է կատարել:<br>Նախ և առաջ, անհրաժեշտ է նշել, որ թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների դեմ տարվող պայքարի արդյունավետության բարձրացմանը զգալիորեն նպաստել է ՀՀ գլխավոր դատախազի հրամանով 2009թ. դեկտեմբերի 9-ին ՀՀ գլխավոր դատախազության կազմում թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների գործերով բաժնի ստեղծումը, որը համակարգում է այս ոլորտում դատախազական հսկողության և դատավարական ղեկավարման աշխատանքների ճիշտ և արդյունավետ կազմակերպումը դատախազական մարմինների կողմից:<br>ՀՀ գլխավոր դատախազության թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների գործերով բաժնի կողմից կատարված ուսումնասիրություններով պարզվել է, որ |

| | | |
|---|---|---|
| | | հանրապետությունում վերջին տարիներին լայն տարածում է ստացել թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի ապօրինի շրջանառությանն առնչվող մի հիմնախնդիր, այն է՝ թմրամոլները դեղատներում ազատ վաճառվող «Սեդալգին» կամ «Կոաքսիլ» տեսակի դեղահաբերը այլ նյութերի (բենզին, աղաթթու, յոդի ոգեթուրմ և այլն) հետ խառնելու արդյունքում ստանում են «կոդեին» տեսակի թմրամիջոց պարունակող լուծամզվածք և ներարկման միջոցով գործածում: Հարցի լուծման համար ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից համապատասխան գրություն է ուղարկվել ՀՀ առողջապահության նախարարին, որի արդյունքում նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարությանն է ներկայացվել «ՀՀ կառավարության 21.08.2003թ. թիվ 1129-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով Թիանեպտին, Տրոպիկամիդ, Պրեգաբալին և Սեդալգին դեղերը ընդգրկվել են թմրամիջոցների և հոգեմետ նյութերի այն ցանկում, որոնց շրջանառության նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում սահմանվում են որոշակի պայմաններ: Նախագիծը հաստատվել է ՀՀ կառավարության 09.12.2010թ. թիվ 1646-Ն որոշմամբ, որից հետո ՀՀ քրեական օրենսգրքով հաստատված թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ցանկում վերոհիշյալ դեղերի զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը ներառելու համար ստեղծվել է աշխատանքային խումբ:<br>2010-2012 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ծրագրով նախատեսված միջոցառումների ժամանակացույցի համաձայն, ՀՀ գլխավոր դատախազությունը մասնավորապես կատարել է ծրագրի ներքոհիշյալ |

| | | |
|---|---|---|
| | | կետերով նախատեսված միջոցառումները.<br>Թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտը կանոնակարգող՝ ՀՀ ներպետական իրավական ակտերի համակարգային վերլուծության իրականացման շրջանակներում ՀՀ գլխավոր դատախազության կողմից մշակվել և ՀՀ ազգային անվտանգության խորհրդի քարտուղարին է ներկայացվել «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացում-ներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը և դրա հիմնավորումը: |
| | | **ՀՀ դատական դեպարտամենտ**<br>Տես 1.1.1 կետը |
| **1.1.3.** | Հայաստանի Հանրապետության ներպետական իրավական ակտերում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի պաշտոնական | **ՀՀ առողջապահության նախարարություն** |
| | | **ՀՀ արդարադատության նախարարություն** |
| | | **ՀՀ ոստիկանություն**<br>ՈՒսումնասիրվել են նաև ՀՀ կառավարության 2003թ. օգոստոսի 21-ի <<Հայաստանի Հանրապետությունում հսկման ենթակա թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների կազմը /ցանկը/ հաստատելու մասին>> թիվ 1129-Ն որոշման հավելվածի 4 ցուցակը /պրեկուրսորների, որոնց շրջանառությունը Հայաստանի Հանրապետությունում սահմանափակ է և որոնց նկատմամբ սահմանված են հսկման եղանակներ/ և ՄԱԿ-ի 1988թ. կոնվենցիայի /թմրամիջոցների և |

| | | |
|---|---|---|
| | հայերեն տեքստերում թմրամիջոցների ն և հոգեմետ նյութերին առնչվող հասկացություններ միասնականացնելու ուղղությամբ միջոցների ձեռնարկում | հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին/ 1-ին և 2-րդ ցուցակներով նախատեսված նյութերը: Հիմք ընդունելով ՄԱԿ-ի 1961թ., 1971թ. և 1988թ. կոնվենցիաների պահանջները և համեմատելով նշված ցուցակներում ընդգրկված նյութերի անվանումները, ի հայտ են եկել որոշ անհամապատասխանություններ՝ նյութերի անվանումների և համապատասխան ցանկում ընդգրկված լինելու առումով:<br>Նշված անհամապատասխանությունները վերացնելու նպատակով նախապատրաստվել, շահագրգիռ գերատեսչությունների հետ համաձայնեցվել և ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 1254-Ն որոշմամբ փոփոխություններ են կատարվել ***2003 թվականի օգոստոսի 21-ի թիվ 1129-Ն որոշման մեջ***, որի նպատակն էր ՀՀ-ում սահմանափակ շրջանառությամբ և հսկման ենթակա պրեկուրսորների ցանկը համապատասխանեցնել «Թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի անօրինական շրջանառության դեմ պայքարի մասին» ՄԱԿ-ի 1988 թվականի դեկտեմբերի 19-ի կոնվենցիային: |
| | | **ՀՀ դատախազություն** |
| | | **ՀՀ արտաքին գործերի նախարարություն** |
| **<u>Նպատակ 2</u>. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի և ներպետական իրավական ակտերի արդյունավետ կիրառելության ապահովումը** | | |
| **1.2.1.** | Հայաստանի Հանրապետությ | **ՀՀ առողջապահության նախարարություն** |

| | | |
|---|---|---|
| | ան միջազգային պայմանագրերի և ներպետական իրավական ակտերի՝ թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարին առնչվող դրույթների կիրառման պրակտիկայի վերլուծության կատարում և դրանց կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը | **ՀՀ արդարադատության նախարարություն** |
| | | **ՀՀ ոստիկանություն**<br>Տես 1.1.2 կետը |
| | | **ՀՀ դատախազություն** |
| | | **ՀՀ դատական դեպարտամենտ**<br>Տես 1.1.1 կետը |
| **1.2.2.** | Թմրամոլության և | **ՀՀ արդարադատության նախարարություն** |

| | | |
|---|---|---|
| | թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտի իրավակիրառ գործունեության հետ կապված մեթոդական ուղեցույցների մշակում` Հայաստանի Հանրապետության դատարանների, իրավապահ և այլ շահագրգիռ մարմինների ու կազմակերպությունների համար | **ՀՀ ոստիկանություն**<br>Մշակման փուլում է գտնվում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտի իրավակիրառ գործունեության հետ կապված մեթոդական ուղեցույցը, որը կտպագրվի 2011թ. 1-ին կիսամյակի ընթացքում: |
| | | **ՀՀ դատախազություն** |
| | | **ՀՀ դատական դեպարտամենտ**<br>Տես 1.1.1 կետը |
| **1.2.3.** | «Թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի ապօրինի | **ՀՀ արդարադատության նախարարություն** |
| | | **ՀՀ արտաքին գործերի նախարարություն** |

| | | |
|---|---|---|
| | շրջանառության դեմ պայքարի մասին» 1988թ. ՄԱԿ-ի կոնվենցիայով նախատեսված իրավական փոխօգնության հարցերով ներպետական իրավասու մարմնի ստեղծման ապահովում | |
| **1.2. 4.** | Հայաստանի Հանրապետությ ան պետական սահմանների արդյունավետ վերահսկողությ անն առնչվող իրավակիրառ գործունեության ուսումնասիրութ | **ՀՀ ոստիկանություն**<br>Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի հարցերով միջգերատեսչական հանձնաժողովի կողմից 2011թ. սեպտեմբերի 30-ին ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ, որի ժամանակ ՀՀ ԿԱ ԱԱԾ-ի տնօրենի առաջին տեղակալ՝ Ռ. Հարությունյանին հանձնարարվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի և ՀՀ ԿԱ ոստիկանության հետ համատեղ ներկայացնել տեղեկանք թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պատշաճ պայքարի համար Իրանի Իսլամական Հանրապետության հետ սահմանային անցակետում անհրաժեշտ տեխնիկական |

| | | |
|---|---|---|
| | յան իրականացում, անհրաժեշտությ ան դեպքում, դրա կատարելագործ ման վերաբերյալ առաջարկությու ններ ներկայացնելը | սարքավորումների պահանջարկի վերաբերյալ:<br>ՀՀ ոստիկանության պետի առաջին տեղակալի 07.10.2011թ. թիվ 29/4-4281 գրությամբ ՀՀ ԱԱԾ է ուղարկվել տեղեկանք, որում առաջարկվել է Մեղրիի պետական սահմանի անցման կետը զինել և վերազինել հետևյալ սարքավորումներով՝<br>✓ Բեռների և տրանսպորտային միջոցների զննման ստացիոնար ռենտգենաճառագայթային սարք /մուտքի վրա/ Rapiscan Eagle® F60 – 1 հատ.<br>✓ Ուղեբեռների խորացված զննման ռենտգենաճառագայթային սարքեր /մուտքի և ելքի վրա/ Rapiscan 628XR – 2 հատ.<br>✓ Անձանց զննման ռենտգենաճառագայթային սարք RAPISCAN SECURE 1000 – 1 հատ.<br>✓ Մետաղյա իրերի հայտնաբերման ֆիքսված սարքեր՝ հետիոտների անցման համար /մուտքի և ելքի վրա/ - METOR 6S - 2 հատ.<br>✓ Մետաղյա իրերի հայտնաբերման շարժական սարքեր /հերթափոխի անձնակազմի թվաքանակից կախված/ - METOR 28 - առնվազն 10 հատ.<br>✓ Ուղևորատրանսպորտային միջոցների զննման ռենտգենաճառագայթային սարք /մուտքի և ելքի վրա/ - RAPSICAN CO2 – 1 հատ.<br>✓ Խորացված զննում իրականացնելու գործիքներ, այդ թվում պտտուտակահաններ, հարթաշուրթեր, մեքենաների հատակի զննման հայելիներ, էնդոսկոպներ, էլեկտրոջահեր, խոշորացնող հայելիներ և այլն - 2 հավաքածու.<br>✓ Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և պրեկուրսորների էքսպրեսս նույնականացման հավաքածուներ՝ բաղկացած համապատասխան |

| | | |
|---|---|---|
| | | քիմիական նյութերից - 2 հավաքածու: Այսօր, Մեղրի ՊՄԱԿ-ում Իրանից դեպի Հայաստան տանող մուտքի վրա տեղադրված է Rapiscan 524 մոդելի ուղեբեռների զննման սարքը, որը հնարավորություն չի տալիս հայտնաբերել թմրամիջոցներ և հոգեմետ նյութեր: Այն անհրաժեշտ է անհապաղ կերպով փոխարինել առնվազն ժամանակակից RAPISCAN 628XR մոդելի սարքով: |
| | | **ՀՀ դատախազություն** |
| | | **ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե**<br>1.2.4 – Հարավային Կովկասում սահմանների համալիր կառավարման ծրագրի շրջանակներում շարունակվում է համագործակցությունը միջազգային կառույցների հետ. կազմակերպվում են հանդիպումներ և քննարկումներ թե' ՀՀ Պետական սահմանին ծառայություն իրականացնող բոլոր գերատեսչությունների, և թե' Վրաստանի Հանրապետության համապատասխան ծառայությունների հետ, կատարվում են ուսուցողական այցեր եվրոպական երկրներ` սահմանների արդյունավետ վերահսկողության եվրոպական առաջատար փորձին տեղում ծանոթանալու և այն նաև ՀՀ-ում ներդնելու նպատակով: |
| | | **ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն** |
| **<u>2. Թմրամիջոցների և թմրամոլության վերաբերյալ տեղեկատվական միասնական համակարգի ներդրումը և կատարելագործումը</u>** | | |
| **<u>Նպատակ 1.</u> Թմրամիջոցների և թմրամոլության վերաբերյալ տեղեկատվական, ինչպես նաև թմրամոլության մոնիտորինգի և գնահատման միասնական համակարգի ներդրումն ու** | | |

| | | |
|---|---|---|
| **կատարելագործումը** | | |
| **2.1.1.** | «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կանոնադրության մեջ փոփոխությունների կատարում՝ դրանում ամրագրելով թմրամիջոցների և թմրամոլության մոնիտորինգի կենտրոնի իրավական կարգավիճակը սահմանող դրույթներ | **ՀՀ առողջապահության նախարարություն**<br>2.1.1 կետի՝ ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Խ.Ավդալբեկյանի անվան տեսանկյունից առավել վտանգի ենթարկվող խմբերի (այդ թվում թմրամիջոցների ներարկային օգտագործողների) չափերի գնահատման հետազոտությունը: Հետազոտության արդյունքների վերաբերյալ զեկույցը գտնվում է տպարանում և հրապարակվելու է 2012թ. –ին: |

| | | |
|---|---|---|
| **2.1.2.** | Թմրամիջոցների եւ թմրամոլության մոնիթորինգի կենտրոնին համապատասխան մարմինների եւ կազմակերպությունների կողմից թմրամիջոցների մասին տվյալների՝ ժամանակին տրամադրման ապահովում: Այդ գործընթացին համապատասխան պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների ակտիվ ներգրավվածութ | **ՀՀ արդարադատության նախարարություն** |
| | | **ՀՀ առողջապահության նախարարություն** |
| | | **ՀՀ դատախազություն** |
| | | **ՀՀ ոստիկանություն**<br>2011թ. ընթացքում 31.01.2011թ. թիվ 29/4-237 գրությամբ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի <<Թմրամիջոցների և թմրամոլության մոնիթորինգի>> կենտրոնին է տրամադրվել 2010թ. և 2011թ. 6 ամիսների արդյունքներով ՀՀ-ում իրավապահ մարմինների կողմից թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության դեմ պայքարի վիճակի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն /զունավոր ձեռնարկ/: |
| | | **ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն** |
| | | **ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե**<br>2.1.2 – Համաձայն բանավոր պայմանավորվածության Թմրամիջոցների և թմրամոլության մոնիթորինգի կենտրոնին կտրամադրվեն տեղեկություններ ՊԵԿ աշխատակիցների կողմից հայտնաբերված թմրամիջոցների և հոգեմետ նյութերի վերաբերյալ՝ նրանց կողմից համապատասխան հարցում ստանալուց հետո: |
| | | **ՀՀ դատական դեպարտամենտ**<br>Տես 1.1.1 կետը |

| | | |
|---|---|---|
| | յան ապահովում | |
| **2.1. 3.** | Թմրամիջոցների մասին համաճարակաբանական տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և տրամադրման միջազգայնորեն ճանաչված լավագույն եղանակների ու փորձի ուսումնասիրում և աստիճանաբար ներդնում՝ հիմք ընդունելով թմրամիջոցների և թմրամոլության | **ՀՀ առողջապահության նախարարություն**<br>2.1.3. կետի՝ ՄԱԿ-ի թմրամոլության և հանցագործության բաժնի կողմից ստացվել է գրականություն: Պարբերաբար նյութեր են ստացվում Թմրամիջոցների և թմրամոլության մոնիթորինգի եվրոպական կենտրոնից: Պատրաստվում է վերլուծություն տարբեր երկրներում մոնիտորինգի իրականացման փորձի վերաբերյալ: 2010-ից սկսած ՀՀ ԱՆ ԱԱԻ-ը աշխատում է տվյալների հավաքագրումը իրականցնել համապատասխան Թմրաիջոցների և թմրամոլության մոնիթորինգի եվրոպական կենտրոնի ուղեցույցների համաձայն: |

| | | |
|---|---|---|
| | մոնիտորինգի Եվրոպական կենտրոնի ուղեցույցները | |
| **2.1. 4.** | Բնակչության շրջանում հետազոտությա ն իրականացում՝ թմրամիջոցների գործածման բնույթը և տարածվածությ ունը գնահատելու նպատակով | **ՀՀ առողջապահության նախարարություն**<br>2.1.4. կետի՝ ՀՀ ԱՆ ԱԱԻ կողմից բնակչության շրջանում թմրամոլության տարածվածության վերաբերյալ ավարտվել է թմրամոլության տվյալների հավաքագրումը և մուտքագրումը: Գնահատումը կիրականացվի 2012 թվականին: |
| **2.1. 5.** | Բնակչության շրջանում թմրամիջոցների խնդրահարույց (ներարկային) գործածման բնույթը և | **ՀՀ առողջապահության նախարարություն**<br>2.1.5. կետի՝ 2010-2011թթ. ՀՀ ԱՆ ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի կողմից իրականացվել են Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտություններ ՄԻԱՎ-ի նկատմամբ խոցելի խմբերում, այդ թվում թմրամիջոցների ներարկային օգտագործողների շրջանում: Հետազոտության արդյունքները հրապարակվել են 2011թ. |

| | | |
|---|---|---|
| | տարածվածությ ան բացահայտում | դեկտեմբերին. «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ վարակի վերաբերյալ կենսաբանական և վարքագծային հետազոտությունների արդյունքները 2010-2011թթ.ե:<br>2010-2011թթ. ՀՀ ԱՆ ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի կողմից իրականացվել է ՄԻԱՎ-ով վարակման է՝ ՀՀ կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 20-ի «Թմրամոլների նկատմամբ բժշկական դիտարկման և նրանց հաշվառման կարգը սահմանելու մասինե թիվ 1599-Ն որոշմամբ: |
| | | **ՀՀ ոստիկանություն**<br>2011թ. ընթացքում համաձայն ՀՀ առողջապահության նախարարության նարկոլոգիական կլինիկայի և ՀՀ փորձաքննությունների ազգային բյուրո ՊՈԱԿ-ի ներկայացված տվյալների՝ հանրապետությունում հաշվառման է վերցվել 1130 անձ, որից 433-ը գործածել են ափիատ խմբին պատկանող թմրամիջոց ներարկային միջոցով:<br>2011թ. մայիսի 19-ին ՀՀ գլխավոր դատախազության կողմից ՀՀ ոստիկանության պետին հասցեագրած միջնորդագրում նշվում է, որ ըստ կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների՝ վերջին տարիներին շատացել է սինթետիկ խմբին պատկանող թմրամիջոցների օգտագործումը հատկապես երիտասարդության շրջանում, ընդ որում վերջիններս ապօրինի թմրամիջոցներ են ձեռք բերում և գործածում հիմնականում գիշերային ակումբներում և ժամանցի այլ վայրերում:<br>Երևան քաղաքում գործող գիշերային ակումբներում, դիսկոտեկներում թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված երևույթները |

| | | |
|---|---|---|
| | | բացահայտելու, ակումբներում թմրամիջոցների իրացմամբ և գործածմամբ զբաղվող անձանց հայտնաբերելու ուղղությամբ կատարված աշխատանքների արդյունքում պարզվել է, որ մի քանի ակումբներում, ըստ ստացված օպերատիվ տեղեկությունների, հնարավոր է իրացվեն տարբեր տեսակի թմրամիջոցներ՝ հատկապես <<էքստազի>> և <<մարիխուանա>>:<br>Վերը նշված խնդրի լուծման կապակցությամբ ՀՀ դատախազության կոլեգիայի 2011թ. մարտի 30-ի նիստում ընդունվել է համապատասխան որոշում, որով առաջարկվում է ՀՀ ոստիկանության պետին՝ ուժեղացնել հսկողությունը գիշերային ակումբներում և ժամանցի այլ վայրերում՝ նշված բնույթի հանցագործությունների նախականխման և բացահայտման նպատակով: |
| **2.1.6.** | Թմրամիջոցների հետ կապված վարակիչ հիվանդություննների «հեպոտիտ C» նկատմամբ պետական վիճակագրական հաշվետվության համակարգի սահմանում | **ՀՀ առողջապահության նախարարություն** |

| | | |
|---|---|---|
| **2.1. 7.** | Թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված՝ մահացության ցուցանիշների արձանագրման նպատակով վիճակագրական հաշվետվությունների ձևերում փոփոխությունների կատարում | **ՀՀ առողջապահության նախարարություն**<br>2.1.7. 2010 թ. կատարվել է միջազգային լավագույն փորձի ուսումնասիրություն այդ թվում Եվրոպական կազմակերպությունների կողմից առաջարկվող թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված՝ մահացության ցուցանիշների արձանագրման նպատակով վիճակագրության հավաքագրման ձևերի ուսումասիրություն: Աշխատանքները շարունակվում են և նախատեսվում է ավարտել 2012թ: |
| **2.1. 8.** | Չափորոշիչների մշակում՝ հերձվողի մարմնի հյուսվածքներում և (կամ) կենսահեղուկներում հայտնաբերված թմրամիջոցների ց առաջացած | **ՀՀ առողջապահության նախարարություն** |

| | | |
|---|---|---|
| | մահվան պատճառը բացահայտելու համար | |
| **2.1.9.** | Ախտաբանաան ատոմիական հերձումների դեպքում հերձվողի հյուսվածքներում և (կամ) կենսահեղուկներում թմրամիջոցների հայտնաբերման ուղղված թունաքիմիական հետազոտության պարտադիր իրականացման կարգի սահմանում | **ՀՀ առողջապահության նախարարություն** |

| | | |
|---|---|---|
| **2.1. 10.** | Թմրամիջոցների և թմրամոլության մասին տեղեկատվական համակարգի հատուկ պաշտպանության և խորհրդապահական (կոնֆիդենցիալ) բնույթի ապահովում | **ՀՀ առողջապահության նախարարություն**<br>2.1.10. Ապահովված առողջապահության ազգային ինստիտուտե ՓԲԸ կանոնադրության մեջ փոփոխությունները կատարվել են 27.01.2011 թվականի 92-Ա հրամանով: |
| **2.1. 11.** | Թմրամիջոցների և թմրամոլության մոնիթորինգի և համաճարակաբանության ոլորտի մասնագետների վերապատրաստման | **ՀՀ առողջապահության նախարարություն**<br>2.1.11. կետի` ծրագրի սկզբին կազմակերպվել է ոլորտի մասնագետների համար ուսումնական այց Չեխյա նշված ոլորտի միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության նպատակով:<br>Որից հետո ՀՀ ԱՆ ԱԱԻ համաճարակաբանության ամբիոնում 2010-2011թթ. կազմակերպվել են դասընթացներ առողջապահական մասնագետների համար «Թմրամոլությունը որպես հանրային առողջության կարևորագույն խնդիրե թեմայով: Բացի այդ ՀՀ ԱՆ ԱԱԻ մասնագիտացում անցնող բոլոր բժիշկերի /2010թ.` 600 բժիշկ, 2011թ ` 430 բժիշկ/ պարտադիր հարակից դասավանդվող առարկաների շարքում |

| | | |
|---|---|---|
| | դասընթացների, սեմինարների, ինչպես նաև ուսուցողական ուղևորությունների կազմակերպում՝ նշված ոլորտի միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության և Հայաստանի Հանրապետությունում դրա աստիճանական ներդրման ապահովման նպատակով | դասավանդվել են նաև թմրամոլության մոնիթորինգի համաճարակաբանական հիմնախնդիրները: |
| **<u>Նպատակ 2.</u> Թմրամիջոցների և թմրամոլության ոլորտի գիտական մոտեցումների արդիականացումների, տվյալ ոլորտի համաշխարհային գիտական փորձի ներդրման ապահովումը** | | |
| **2.2.** | Հետազոտությու | **ՀՀ առողջապահության նախարարություն** |

| | | |
|---|---|---|
| **1.** | ների մշակում և իրականացում՝ թմրամիջոցների գործածման իրավիճակի բացահայտման, միտումների ու զարգացումների գնահատման և դրանց պատճառահետևանքային կապի վերհանման, ինչպես նաև հետագա գործունեության ոլորտների նախանշման նպատակով | 2.2.1. կետի՝ ՀՀ ԱՆ ԱԱԻ կողմից վերանայվում են թմրամիջոցների գործածման վերաբերյալ բոլոր հաշվետվական և հաշվառման ձևերը: Աշխատանքը սկսվել է 2010թ երկրորդ կիսամյակում ավարտվելու է 2012թ երկրորդ կիսամյակում: |
| **2.2.2.** | Քննարկվող ոլորտի համաշխարհային առաջատար | **ՀՀ առողջապահության նախարարություն**<br>2.2.2. կետի՝ Համաշխարհային առաջատար գիտական փորձի ուսումնասիրումը մշտական իրականացվող գործընթաց է, որը կատարվում է սկաց 2010թ-ից: ՀՀ ԱՆ ԱԱԻ-ում բժիշկների համար |

| | | |
|---|---|---|
| | գիտական փորձի ուսումնասիրում և Հայաստանի Հանրապետությունում դրա ներդրման ուղղությամբ միջոցների ձեռնարկում | նախատեսված և իրականացվող ուսումնական ծրագրերում ներկայցվում են համաշխարհային առաջատար գիտական մոտեցումները, այդ թվում ԱՀԿ-ի, ԹԹԵՄԿ-ի և ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցագործությունների գրասենյակի:<br>Ներկայում, ՀՀ ԱՆ մասնակցությամբ իրականացվող բոլոր հետազոտությունները իրակացվում են հաշվի առնելով առաջատար գիտական փորձը և միջազգային կազմակերպությունների, հիմնականում ԱՀԿ-ի ուղղեցույցերում ամրագրված սկզբունքների համապատասխան: |
| **3. Թմրամոլության առաջնային կանխարգելումը** | | |
| Նպատակ 1. **Թմրամոլության կանխարգելումն անչափահասների և երիտասարդների շրջանում** | | |
| **3.1. 1.** | Անհրաժեշտ իրավական ակտերի մշակում և ընդունում՝ անչափահասների և երիտասարդների շրջանում թմրամոլության կանխարգելման միջոցառումներ | **ՀՀ առողջապահության նախարարություն**<br>3.1.1. կետի՝ Երեխաների և դեռահասների առողջության պահպանման ռազմավարության մեջ հաշվի են առնվել դեռահասների վարքագծային գործոնների վերաբերյալ հիմնախնդիրները: |
| | | **ՀՀ կրթության եւ գիտության նախարարություն** |
| | | **ՀՀ սպորտի եւ երիտասարդության նախարարություն**<br><br>Նախարարությունը առաջարկություններ չունի: |

| | | |
|---|---|---|
| | ի կանոնակարգման համար | |
| **3.1. 2.** | Դեռահասների ու երիտասարդների համար «Հավասարը՝ հավասարինե մեթոդով ուսուցման ձեռնարկի և անհրաժեշտ ուսումնական նյութերի մշակում | **ՀՀ առողջապահության նախարարություն**<br>3.1.2. կետի՝ Դեռահասների և երիտասարդների շրջանում «Հավասարը հավասարինե մեթոդով ուսուցման համար անհրաժեշտ ուսումնական նյութերը մշակված են «ՁԻԱՀ-ի կանխարգելում, կրթություն և խնամքե հասարակական կազմակերպության հետ համագործակցությամբ: 2012թ.-ին ՀՀ կրթության և գիտության նախարարության մեթոդական ճժանդակությամբ կմշակվի դեռահասների ու երիտասարդների շրջանում «Հավասարը հավասարինե մեթոդով ուսուցման ձեռնարկ:<br>«Հավասարը՝ հավասարինե մեթոդով մշակվել է ուսուցման, վերապատրաստման դասընթացի և անհրաժեշտ ուսումնական նյութերի փաթեթը: |
| | | **ՀՀ կրթության եւ գիտության նախարարություն** |
| **3.1. 3.** | Անչափահասների և երիտասարդների շրջանում «Հավասարը՝ հավասարին» մեթոդով | **ՀՀ առողջապահության նախարարություն**<br>3.1.3. կետի՝ «Հավասարը հավասարինե մեթոդով ուսուցումը կատարված է ամառային դպրոցի ձևաչափով 5 օրյա 2 հերթափոխով «ՁԻԱՀ-ի կանխարգելում, կրթություն և խնամքե հասարակական կազմակերպության հետ համագործակցությամբ: Յուրաքանչյուր հերթափոխում մասնակցել են ՀՀ տարբեր մարզերից 40 դեռահաս ու երիտասարդ: 2012 թվականին նույնպես կկազմակերպվի «Հավասարը |

| | | |
|---|---|---|
| | ուսուցման համակարգի զարգացում և յուրաքանչյուր տարի այդ համակարգով ուսուցման իրականացում | հավասարինէ մեթոդով ուսուցման ամառային դպրոց: «Հավասարը՝ հավասարինէ մեթոդով անցկացվել է վերապատրաստման դասընթաց, ունկնդիրներին տրամադրվել է անհրաժեշտ ուսումնական նյութերի փաթեթ:<br>2011 թվականին անց են կացվել սեմինար-խորհրդակցություններ «Հավասարը հավասարինէ մեթոդով ուսուցուման ծրագրի և ընդհանուր կրթական համակարգի միջև գործնական համագործակցություն ապահովելու նպատակով: |
| | | **ՀՀ կրթության եւ գիտության նախարարություն** |
| **3.1.4.** | Սեմինար-խորհրդակ-ցությունների անցկացում՝ ընդհանուր կրթական և «Հավասարը՝ հավասարին» մեթոդով ուսուցման ծրագրերի միջև գործնական համագործակցություն | **ՀՀ առողջապահության նախարարություն**<br>3.1.4. կետի՝ 2011 թվականին անց են կացվել սեմինար-խորհրդակցություններ «Հավասարը հավասարինէ մեթոդով ուսուցուման ծրագրի և ընդհանուր կրթական համակարգի միջև գործնական համագործակցություն ապահովելու նպատակով: |
| | | **ՀՀ կրթության եւ գիտության նախարարություն** |

| | | |
|---|---|---|
| | ապահովելու նպատակով | |
| **3.1.5.** | Անչափահասնե րի և երիտասարդներ ի արտաուսումնա կան գործունեության ու հանգստի հետ կապված ծրագրերի իրականացում՝ նրանց շրջանում թմրամիջոցների գործածման նկատմամբ սոցիալական անձեռնմխելիու թյան խթանման նպատակով | **ՀՀ կրթության եւ գիտության նախարարություն**<br>Մարզաառողջարարական ճամբարներում իրականացվել են ծխելու և թմրամոլության դեմ պայքարի միջոցառումներ (դասընթացներ, թրեյնինգներ և այլն):<br>ՀՀ ԿԳՆ ենթակայության արտադպրոցական կրթադաստիարակչական հիմնարկներին բաժանվել են պաստառներ՝ տեսանելի վայրերում փակցնելու համար:<br>Նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին մեթոդական օգնություն է ցուցաբերվել՝<br>- առողջ ապրելակերպին նպաստող միջոցառումներ իրականացնելու,<br>- ծխելու դեմ պայքարի բնագավառում աշխատանքներ կատարելու,<br>- արտալսարանային դաստիարակչական աշխատանքների ընթացքում թմրամիջոցների օգտագործման դեմ պայքարի հարցերը ներառելու ուղղությամբ,<br>- առողջապահության ոլորտի աշխատողների հետ հանդիպումներ կազմակերպելու և նրանց այս աշխատանքներում ներգրավելու ուղղությամբ:<br>«Առողջ ապրելակերպե առարկայի ծրագրում «Վնասակար սովորություններե բաժնում ներառվել են բնակչության շրջանում թմրամոլության կանխարգելման թեմայի վերաբերյալ տեղեկատվական ոլորտի արդիականացման մասին նյութեր: |
| | | **ՀՀ սպորտի եւ երիտասարդության նախարարություն**<br>Նախարարությունը, համաձայն ՀՀ սպորտի և երիտասարդության |

| | | |
|---|---|---|
| | | հարցերի նախարարի 2011 թվականի հոկտեմբերի 5-ի N 125-Ա/1 հրամանի, իրականացրել է «Y-E-N ամառային համալսարան, երիտասարդական նախաձեռնությունները՝ հակաճգնաժամային դեղամիջոցե ծրագիրը: 2011 թվականի դեկտեմբերի 8-ի N 163-Ա/1 հրամանի համաձայն իրականացրել է «Ո՝չ թրաֆիքինգինե ծրագիրը, իսկ 2011 թվականի դեկտեմբերի 8-ի N 165-Ա/1 հրամանի համաձայն՝ «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, սեռավարակների և թմրամոլության տարածման կանխարգելումե թեմայով սեմինար-դասընթացներ: Նախարարության կողմից մշակվել և իրականացվել են նաև մի շարք այլ միջոցառումներ: |
| **3.1.6.** | Հանրակրթական դպրոցների և ուսումնական այլ հաստատությունների ուսումնական ծրագրերում թմրամոլության կանխարգելման առնչվող դասաժամերի ընդգրկում | **ՀՀ կրթության եւ գիտության նախարարություն**<br>ՀՀ ԿԳ նախարարության կողմից երաշխավորված ծրագրերի և ուսումնական նյութերի հիման վրա 2008-2009 ուսումնական տարվանից հանրապետության հիմնական դպրոցների 8-9րդ դասարաններում, իսկ 2010-2011 ուսումնական տարվանից՝ 10-11-րդ դասարաններում դասավանդվում է «Առողջ ապրելակերպե դասընթացը, որում ներառված են թմրամոլության կանխարգելմանն առնչվող դասաժամեր: Երաշխավորվել են գործածության «Առողջ ապրելակերպե դասընթացի ուսուցչի ձեռնարկը և ուսուցողական պաստառները:<br>Նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին հանձնարարված է՝<br>ա/ ընդհանուր հումանիտար և սոցիալ տնտեսագիտական առարկայախմբի համապատասխան առարկաների ծրագրային ժամերից հատկացնել դասաժամեր՝ թմրամոլության դեմ պայքարի և դրա կանխարգելման հարցերի վերաբերյալ,<br>բ/ ուսումնական ծրագրերի կատարման ընթացքի վերաբերյալ |

| | | |
|---|---|---|
| | | տեղեկություններ ներկայացնելիս դրանցում ներառել նաև թմրամոլության դեմ պայքարի հարցերի ուսուցմանն առնչվող արդյունքները: Հանրապետության մի քանի բուհերում «Իրավագիտություն» առարկայի ծրագրի «Վնասակար սովորություններ» բաժնում 2-4 դասաժամով ներառված է թմրամոլության դեմ պայքարի և դրա կանխարգելման թեման: |
| **3.1.7.** | Սեմինարների, վերապատրաստման դասընթացների կազմակերպում հանրակրթական դպրոցներում և ուսումնական այլ հաստատություններում համապատասխան առարկաներ դասավանդող անձանց թմրամոլության և դրա կանխարգելման | **ՀՀ կրթության եւ գիտության նախարարություն**<br>ՀՀ կրթության և գիտության նախարարության, ՄԱԿ-ի բնակչության և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամների, ինչպես նաև Հայաստանի բժիշկ ուսանողների գիտական ասոցիացիայի (ՀԲՈՒԳԱ) միջև 01.06.2011թ. ստորագրված՝ «Հայաստանի դպրոցների 10-11-րդ դասարաններում «Առողջ ապրելակերպ» առարկայի դասավանդման համար կայուն համակարգի հիմնման վերաբերյալ միասնական ծրագրի» շրջանակներում 2011թ. 2-րդ կիսամյակում ՀԲՈՒԳԱ-ի կողմից վերապատրաստվել են 600 ուսուցիչներ, որոնք դասավանդելու են «Առողջ ապրելակերպ» դասընթացը 10-11-րդ դասարաններում: Մշակվել է 8-9-րդ դասարանների համար «Առողջ ապրելակերպ» դասընթացի ուսուցիչների վերապատրաստման նյութերի փաթեթ:<br>Անցկացվել է սեմինար-խորհրդատվություն Գյումրիի դպրոցների «Առողջ ապրելակերպ» առարկան դասավանդող ուսուցիչների համար:<br>Կրթության ազգային ինստիտուտի ՄԿՈՒԶԱԿ հիմնարկի կողմից 2011 թվականին իրականացված վերապատրաստումների ծրագրերում ներառվել են նաև թմրամոլության դեմ պայքարի վերաբերյալ հարցեր:<br>Բուհերում յուրաքանչյուր կիսամյակ անց են կացվել ներբուհական |

| | | |
|---|---|---|
| | ն ուղղված միջոցառումներ ի վերաբերյալ իրազեկության մակարդակի բարձրացման նպատակով | սեմինարներ՝ «Թմրամիջոցների և թմրամոլության կանխարգելումըե թեմայով: |
| **3.1.8.** | Երիտասարդական կենտրոնների աշխատողների համար համապատասխան սեմինար-վարժանքների անցկացում | **ՀՀ առողջապահության նախարարություն**<br>3.1.8. կետի՝ Երիտասարդական կենտրոնների աշխատողների համար համապատասխան սեմինար-վարժանքների անցկացումը կկատարվի 2011 թվականի 4-ին եռամսյակում, ՀՀ կրթության և գիտության ու սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունների հետ համագործակցությամբ:<br>ՀՀ կրթության և գիտության ու սպորտի և երիտասարդության հարցերի նախարարույունների հետ համագործակցությամբ «Հավասարը՝ հավասարինե մեթոդով անցկացվել է վերապատրաստողների վերապատրաստման դասընթաց, նրանց տրամադրվել է անհրաժեշտ ուսումնական նյութերի փաթեթ: |
| | | **ՀՀ կրթության եւ գիտության նախարարություն** |
| | | **ՀՀ սպորտի եւ երիտասարդության նախարարություն**<br>Նախարարությունը 2011 թվականի ընթացքում միջոցառումներ չի իրականացրել, քանի որ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 1715-Ն որոշման՝ |

| | | |
|---|---|---|
| | | «Սպորտային միջոցառումների կազմակերպման կենտրոնե և «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոնե պետական ոչ առևտրային կազմակերպությունները լուծարվել են, որի հետևանքով մարզային երիտասարդական կենտրոնները 2011 թվականի ընթացքում չեն գործել: |
| **3.1.9.** | Թմրամոլության ու դրա հասցրած վնասի վերաբերյալ գրքույկների և ուսումնական այլ նյութերի մշակում և երեխաներին ու նրանց օրինական ներկայացուցիչներին (ծնողներ, որդեգրողներ, խնամակալներ, հոգաբարձուներ) անվճար տրամադրում՝ նրանց | **ՀՀ առողջապահության նախարարություն**<br>3.1.9. կետի՝  Կատարված է «ՁԻԱՀ-ի կանխարգելում, կրթություն և խնամքե, «Հակաթմրամոլային քաղաքացիական դաշինքե և «Իրական աշխարի, իրական մարդիկե հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությամբ: |
| | | **ՀՀ կրթության եւ գիտության նախարարություն** |
| | | **ՀՀ սպորտի եւ երիտասարդության նախարարություն**<br>Նախարարությունը, համաձայն ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի  նախարարի 2011 թվականի նոյեմբերի 24-ի N 159-Ա/1 հրամանի, իրականացրել է ««Իրազեկված ենք՝ ուրեմն պաշտպանված ենքե տեղեկատվական գրքույկի տպագրությունե  ծրագիրը: |

| | | |
|---|---|---|
| | իրազեկության բարձրացման և թմրամոլության կանխարգելման գործընթացին ակտիվ ներգրավվածության ապահովման նպատակով | |
| **3.1. 10.** | Անչափահասների և երիտասարդների շրջանում թմրամոլության կանխարգելման նախաձեռնություններին հասարակական կազմակերպությունների ներգրավման ապահովում | **ՀՀ առողջապահության նախարարություն**<br>3.1.10. կետի՝ 2010 և 2011 թվականներին կատարված է: Ներգրավված են թմրամոլության կանխարգելման դաշտում գործող բոլոր 3 հասարակական կազմակերպությունները՝ «ՁԻԱՀ-ի կանխարգելում, կրթություն և խնամքե, «Հակաթմրամոլային քաղաքացիական դաշինքե և «Իրական աշխարհ, իրական մարդիկե հասարակական կազմակերպությունները: 2012 թվականին նույնպես կշարունակվի սերտ համագործակցությունը այդ կազմակերպությունների հետ: |
| | | **ՀՀ կրթության եւ գիտության նախարարություն** |
| | | **ՀՀ սպորտի եւ երիտասարդության նախարարություն**<br>Նախարարությունը, համաձայն ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 8-ի N 165-Ա/1 հրամանի, իրականացրել է «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, սեռավարակների և |

| | | |
|---|---|---|
| | | թմրամոլության տարածման կանխարգելումե թեմայով սեմինար-դասընթացներ: |
| **<u>Նպատակ 2.</u> Թմրամոլության կանխարգելումը ազատությունից զրկված անձանց շրջանում** | | |
| **3.2.1** | Անհրաժեշտ իրավական ակտերի մշակում եւ ընդունում՝ ձերբակալված անձանց պահելու վայրերում և քրեակատարողական հիմնարկներում թմրամոլության կանխարգելման միջոցառումներ ի կանոնակարգման համար | ***ՀՀ արդարադատության նախարարություն*** |
| | | ***ՀՀ ոստիկանություն***<br>Ի կատարումն ՀՀ կառավարության 01.04.2010թ. թիվ 354-Ն որոշմամբ հաստատված <<Ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011 թվականների բարեփոխումների>> ծրագրի 39.1, ինչպես նաեւ <<2010-2012թթ. ընթացքում ՀՀ-ում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ծրագրով նախատեսված միջոցառումների ժամանակացույցի>> 3.2.1 կետի պահանջների մշակվել, շահագրգիռ գերատեսչությունների հետ համաձայնեցվել և իրավական փորձաքննության են ներկայացվել <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշման մեջ լրացում և 2011 թվականի ապրիլի 21-ի թիվ 618-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծերը, որոնցով նախատեսվում է ազատազրկման վայրերում թմրակախվածության համար հարկադիր բուժում անցնող, ինչպես նաև դիսպանսերային հսկողության տակ գտնվող թմրամոլների վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը՝ ՀՀ ոստիկանությանը: Որոշման նախագիծն ընդունվել է ՀՀ կառավարության 2011թ. նոյեմբերի 3-ի թիվ 1564-Ն որոշմամբ, համաձայն որի հաշվառված և (կամ) հաշվառումից հանված՝ հոգեներգործուն նյութերից կախվածություն և հակում ունեցող |

| | | |
|---|---|---|
| | | անձանց մասին տեղեկությունները Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության կողմից յուրաքանչյուր ամիս տրամադրվում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը: <br> Հիշյալ գործընթացով կկանոնակարգվի ազատազրկման վայրերում թմրակախվածության համար հարկադիր բուժում անցնող, ինչպես նաև դիսպանսերային հսկողության տակ գտնվող թմրամոլների վերաբերյալ տեղեկությունները ՀՀ ոստիկանությանը տրամադրելու գործընթացը, որով կնվազեցվի թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի հոսքը քրեակատարողական հիմնարկներ: |
| **3.2.2** | Ազատությունից զրկված անձանց շրջանում «Հավասարը՝ հավասարին» մեթոդով ուսուցման համակարգի ներդնում և յուրաքանչյուր տարի այդ համակարգով ուսուցման | **ՀՀ արդարադատության նախարարություն** <br> «Հավասարը հավասարինե մեթոդով ուսուցման համակարգը ներդրված է, փուլ առ փուլ քրեակատարողական ծառայությունում աշխատող բոլոր բուժծառայողները ստանում են ուսուցում: 2011 թվականի հունվար ամսին միջազգային Կարմիր խաչի կողմից անցկացված ուսուցման ծրագրին մասնակցել և համապատասխան արտոնագիր են ստացել բոլոր քրեակատարողական հիմնարկների բժշկական սպասարկման բաժինների բժիշկների մեծ մասը: ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդելու և թմրամոլության կանխարգելման նպատակով 14.02.2011 թվականին ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության պետի հրամանով ստեղծվել է մեթադոնային փոխարինող բուժման հանձնաժողով: |

| | | |
|---|---|---|
| | իրականացում | |
| **3.2.3** | Ազատությունից զրկված անձանց թմրամոլության ու դրա հասցրած վնասի հետ կապված կամավոր խորհրդատվություն և հետազոտություն տրամադրելու վերաբերյալ անհրաժեշտ իրավական ակտերի մշակում և ընդունում | **ՀՀ արդարադատության նախարարություն**<br>Քրեակատարողական հիմնարկներում հոգեբանների և սոցիալական աշխատողների կողմից կամավոր անհատական խորհրդատվություն է տրամադրվել այն դատապարտյալներին, ում դատարանի դատավճռով նշանակված է հարկադիր բուժում թմրամոլության դեմ:<br>Միաժամանակ իրազեկման և կանխարգելման նպատակով պարբերաբար խմբային աշխատանքներ են իրականացվել թմրամոլության և դրա հասցրած վնասների վերաբերյալ: |
| **3.2.4** | Ձերբակալված անձանց պահելու վայ-րերի և քրեակատարող | **ՀՀ արդարադատության նախարարություն**<br>«Գլոբալ» հիմնադրամի ֆինանսավորմամբ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց և դատապարտյալներին տրամադրվել են թմրամոլության և դրա հասցրած վնասի վերաբերյալ տեղեկատվական-կրթական նյութեր: |

| | | |
|---|---|---|
| | ական հիմնարկ-ների անձնա-կազմերին, ինչպես նաև ազատությունից զրկված անձանց թմրամոլության և դրա հասցրած վնասի, ինչպես նաև նշվածի հետ կապված կամավոր խորհրդատվությ ան և հետազոտությա ն մասին տեղե-կատվական-կրթական նյութերի անվճար տրամադրում | |
| | | **ՀՀ ոստիկանություն**<br>ՁՊՎ-ների վարչակազմի ծառայողների շրջանում թմրամոլության կանխարգելման ուսուցողական աշխատանքների կազմակերպման հարցը պարբերաբար ներառվում է ՀՀ ոստիկանության հիմնական կազմակերպչական միջոցառումներով նախատեսված գործնական-մեթոդական օգնություն ցուցաբերելու պլան-առաջադրանքներում: |
| **3.2.5** | Ձերբակալված անձանց պահելու | **ՀՀ արդարադատության նախարարություն** |
| | | **ՀՀ ոստիկանություն** |

| | | |
|---|---|---|
| | վայրերի և քրեակատարող ական հիմնարկ-ների կրտսեր և ավագ սպայակազմի համար սեմինար-խորհրդակցությունների, հատուկ դասընթացների կազմակերպում՝ այդ հիմնարկ-ներում թմրամոլության կանխարգելման ծրագրերի իրականացման արդյունա-վետության բարձրացման նպատակով | ՀՀ ոստիկանության ուսումնական կենտրոնում վերապատրաստման դասընթացներին ընդգրկված միջին և կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող այն ծառայողների համար, որոնք ծառայություն են իրականացնում ձերբակալված անձանց պահելու վայրերում, անցկացվել են սեմինար-պարապմունքներ <<Թմրամիջոցների հոգեներգործուն նյութերի տեսակները և դրանց ճանաչման ձևերը>> թեմայով, ինչպես նաև «ՀՀ քրեական իրավունք» առարկայից դասավանդվել են «թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի առանձնահատկությունները» թեման, որի շրջանակներում լուսաբանվել են տվյալ հանցագործության դեմ պայքարի հիմնախնդիրներին վերաբերվող առանձնահատկությունները, դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումները, հանցագործության քրեաիրավական սահմանումները եւ նշված հանցագործության համար նախատեսված պատժատեսակները: |
| **3.2.** | Յուրաքանչյուր | **ՀՀ արդարադատության նախարարություն** |

| | | |
|---|---|---|
| **6** | տարի ձերբակալված անձանց պահելու վայրերի և քրեակա-տարողական հիմնարկների անձնակազմի համար ուսուցողական սեմինարների կազմակերպում «Հավասարը՝ հավասարին» մեթոդով ուսուցման և թմրամոլության կանխարգելման իրականացման համար | ՀՀ օրենսդրության համապատասխան քրեակատարողական ծառայության գլխավոր, առաջատար, միջին և կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող քրեակատարողկան ծառայողները ենթակա են պարտադիր վերապատրաստման: Վերապատրաստման դասընթացները պարունակում են նաև թմրամոլության կանխարգելման ծրագրեր: Բացի այդ ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչությունում և քրեակատարողական հիմնարկներում յուրաքանչյուր շաբաթ իրականացվում է մասնագիտական պարապմունքներ, որոնք ևս ներառում են թմրամոլության կանխարգելման ծրագրեր: Ուսումնասիրվում է «Հավասարը հավասարինե մեթոդի ներդրման հնարավորությունները : |
| | | **ՀՀ ոստիկանություն** |
| **3.2.7** | Ձերբակալված անձանց պահելու | **ՀՀ արդարադատության նախարարություն**<br>Գիտական գրականությունից և էլեկտրոնային կայքերի միջոցով ուսումնասիրվել է ազատազրկման վայրերում թմրամոլության դեմ տարվող |

| | | |
|---|---|---|
| | վայրերի եւ քրեակատարողական հիմնարկների ավագ սպայակազմի ուսուցողական ուղեւորությունների կազմակերպում՝ նշված հիմնարկներում թմրամոլության կանխարգելման ծրագրերի հաջող իրականացման փորձ ունեցող երկրներ | մասնագիտական, սոցիալ-հոգեբանական աշխատանքների առաջավոր փորձը, ինչից ելնելով՝ հաջող փորձ ունեցող երկրներ են ընտրվել Լեհաստանը, Խորվաթիան, Մեծ Բրիտանիան: Նշված երկրներ սպայական կազմից մասնագետների ուսուցողական ուղղորությունների կազմակերպման դեպքում հնարավոր կլինի այդ երկրների առաջավոր փորձը կիրառելի դարձնել նաև ՀՀ ազատազրկման վայրերում: |
| | | **ՀՀ ոստիկանություն** |
| <u>Նպատակ 3.</u> **Թմրամոլության կանխարգելումը զինծառայողների շրջանում** | | |
| **3.3.1** | Անհրաժեշտ իրավական ակտերի | **ՀՀ պաշտպանության նախարարություն** |
| | | **ՀՀ ոստիկանություն** |

| | | |
|---|---|---|
| | մշակում եւ ընդունում՝ զինծառայողների շրջանում թմրամոլության կանխարգելման միջոցառումների կանոնակարգման համար | ՀՀ ոստիկանության զորքերի 02.04.2011թ. թիվ 4/4-432 գրությամբ հայտնվել է, որ Հայաստանի Հանրապետությունում 2010-2012 թվականների ընթացքում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագրով և ծրագրի իրականացման ժամանակացույցով՝ ՀՀ ոստիկանության գործունեության ոլորտին վերաբերող դրույթների ծրագրային միջոցառումների ժամանակացույցի **3-րդ նպատակի** <<Թմրամոլության կանխարգելում զինծառայողների շրջանում>> ցանկի միջոցառումների 1-ին կատարողը պաշտպանության նախարարությունն է:<br>Ոստիկանության զորքերը՝ որպես այլ զորքեր, ղեկավարվում են պաշտպանության նախարարության ուղեցույցերով:<br>Ցանկում նշված միջոցառումների վերաբերյալ ոստիկանության զորքերը որևէ փաստաթուղթ չի ստացել:<br>Ոստիկանության զորքեր ընդունելության ժամանակ թեկնածուները ստուգվում են բժշկական հանձնաժողովի կողմից:<br>Դասընթացների միջոցով զինծառայողներին պարբերաբար ներկայացվում է թմրամիջոցների գործածման վնասակարությունը: |
| | | **ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն** |
| **3.3.2** | Զինծառայողների շրջանում ներդնել «Հավասարը՝ հավասարին» մեթոդով | **ՀՀ պաշտպանության նախարարություն** |
| | | **ՀՀ ոստիկանություն**<br>Տես 3.3.1կետ |
| | | **ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն** |

| | | |
|---|---|---|
| | ուսուցման համակարգը և յուրաքանչյուր տարի այդ համակարգով ուսուցման իրականացում | |
| **3.3.3** | Զինծառայողներին թմրամոլության ու դրա հասցրած վնասի հետ կապված կամավոր խորհրդատվություն և հետազոտություն տրամադրելու վերաբերյալ անհրաժեշտ իրավական ակտերի մշակում եւ ընդունում | **ՀՀ պաշտպանության նախարարություն** |
| | | **ՀՀ ոստիկանություն**<br>Տես 3.3.1կետ |
| | | **ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն** |

| | | |
|---|---|---|
| | | |
| **3.3.4** | Զինծառայողներին թմրամոլության և դրա հասցրած վնասի, ինչպես նաև նշվածի հետ կապված կամավոր խորհրդատվության և հետազոտության վերաբերյալ տեղե-կատվական-կրթական նյութերի անվճար տրամադրում | **ՀՀ պաշտպանության նախարարություն** |
| | | **ՀՀ ոստիկանություն**<br>Տես 3.3.1կետ |
| | | **ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն** |

| | | |
|---|---|---|
| **3.3.5** | Զինված ուժերի և այլ զորքերի սպայական կազմի համար սեմինար-խորհրդակցությունների, հատուկ դասընթացների կազմակերպում՝ դրանցում թմրամոլության կանխարգելման ծրագրերի իրականացման արդյունա-վետության բարձրացման նպատակով | **ՀՀ պաշտպանության նախարարություն** |
| | | **ՀՀ ոստիկանություն**<br>Տես 3.3.1կետ |
| | | **ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն**<br>ՀՀ ԱԱԾ գիտաուսումնական կենտրոնում դասավանդվում են հետևյալ թեմաները՝<br>– «Իրացնելու նպատակով թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառություն կամ դրանց ապօրինի իրացման քրեաիրավական բնութագիրըէ<br>– «Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի գործածմանը հակելու կամ ներգրավելու քրեաիրավական բնութագիրըէ<br>– «Մշակումն արգելված թմրանյութեր, հոգեմետ, խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր ապօրինի ցանելու կամ աճեցնելու քրեաիրավական բնութագիրըէ<br>– «Թմրամիջոցներ կամ հոգենետ նյութեր գործածելու համար որջեր կազմակերպելու կամ պահելու քրեաիրավական բնութագիրըէ<br>– «Թմրաբիզնեսը որպես կազմակերպված հանցավոր խմբավորումների գործունեության առանձին ուղղությունէ<br>– «Թրաֆիքինգում ներգրավված անձանց հնարավորությունների օգտագործման առանձնահատկությունները թմրամիջոցների ապօրինի շրջանառության կազմակերպման գործումէ<br>– «Թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը միջազգային ահաբեկչական կազմակերպությունների մասնակցության |

| | | |
|---|---|---|
| | | առանձնահատկությունները: |
| **3.3.6** | Յուրաքանչյուր տարի զինված ուժերի և այլ զորքերի սպայական կազմի համար կազմակերպել ուսուցողական սեմինարներ «Հավասարը՝ հավասարին» մեթոդով ուսուցման և թմրամոլության կանխարգելման իրականացման համար | **ՀՀ պաշտպանության նախարարություն** |
| | | **ՀՀ ոստիկանություն**<br>Տես 3.3.1կետ |
| | | **ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն** |
| **3.3.7** | Զինված ուժերի և այլ զորքերի սպայական կազմի ուղնորություննե ր այդ ոլորտում | **ՀՀ պաշտպանության նախարարություն** |
| | | **ՀՀ ոստիկանություն**<br>Տես 3.3.1կետ |
| | | **ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն** |

| | | |
|---|---|---|
| | թմրամոլության կանխարգելման ծրագրերի հաջող իրականացման փորձ ունեցող երկրներ | |
| **<u>Նպատակ 4.</u> Զանգվածային լրատվության միջոցների դերի բարձրացումը թմրամոլության կանխարգելման գործում** | | |
| **3.4.1** | Հանրային և մասնավոր հեռուստառադի ոընկերություն-ների հետ համատեղ երկարաժամկետ կայուն աշխատանքայի | **ՀՀ ոստիկանություն**<br>ՀՀ ոստիկանության ՀԿԼՎ պետի 27.12.2010 թվականի թիվ 10 - Ա հրամանով հաստատված <<Հանրային և մասնավոր հեռուստառադիոընկերությունների հետ աշխատանքի>> կանոնակարգով կատարվել են հետևյալ աշխատանքները՝<br>կանոնակարգի 2-րդ կետի համաձայն՝ 2011թ. ընթացքում ՀԿԼՎ և ԶԼՄ ներկայացուցիչների համագործակցության շրջանակներում ոստիկանության համապատասխան պաշտոնյաներ տվել են մեկ տասնյակից ավելի հարցազրույցներ թմրամոլության և թմամիջոցների |

| | | |
|---|---|---|
| | ն կանոնակարգի մշակում՝ ուղղված Հայաստանի Հանրապետությ ունում թմրամոլության կանխարգելման արտացոլմանը, այդ թվում՝ հատուկ հաղորդումների, թմրամոլության հացրած վնասի վերաբերյալ հայտարարությո ւնների, թեմատիկ ֆիլմերի շարունակական հեռարձակման միջոցով | ապօրինի շրջանառության կանխարգելման թեմաներով, այդ թվում՝ ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ ԹԹԴՊ վարչության պետ Նազարեթ Մնացականյանը ԶԼՄ ներկայացուցիչների հետ հանդիպել է <<Փաստարկ>> և <<Դե ֆակտո>> ակումբներում:<br>Կանոնակարգի 3-րդ կետի համաձայն՝ Հայաստանի հանրային հեռուստաընկերության <<02>>, <<Արմենիա>> հեռուստաընկերության <<Հերթապահ մաս>> հաղորդաշարերով և Հանրային ռադիոյի <<02>> ծրագրով 2011 թ. ընթացքում եթեր է հեռարձակվել թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը վերաբերող 68 տեսանյութ:<br>Կանոնակարգի 5-րդ կետի համաձայն՝ նույն ժամանակահատվածում <<02>> շաբաթաթերթում տպագրվել է 62 հոդված և 13 թեմատիկ հրապարակում:<br>Կանոնակարգի 6-րդ կետի համաձայն՝ ՀԿԼ վարչության կողմից պատրաստվել ու տպագիր և էլեկտրոնային ԶԱՄ-ներին են տրվել վիճակագրական տվյալներ, որոնց հիման վրա հրապարակվել են թմրամոլության կանխարգելմանն ուղղված հոդվածներ:<br>ԿՀԴՊ գլխավոր վարչություն են հրավիրվել ԶԼՄ-ների ներկայացուցիչներ, որոնց հետ թմրամոլության հետ կապված հարցերի, դրա դեմ պայքարի մոտեցումների վերաբերյալ աշխատանքի ընթացքը, սկզբունքներն ու մոտեցումներն է ներկայացրել ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ ԹԹԴՊ վարչության պետ Նազարեթ Մնացականյանը:<br>Թեմատիկ ֆիլմեր և տեսահոլովակներ նախատեսվում է նկարահանել 2012 թ.՝ ֆինանսավորման աղբյուրներ գտնելու պարագայում: |
| **3.4.** | Թմրամոլության | **ՀՀ ոստիկանություն** |

| | | |
|---|---|---|
| **2** | կանխարգելման նպատակով իրականացվող միջոցառումներ ի՝ զանգվածային լրատվության միջոցներով, ինչպես նաեւ առանձին հոդվածներով պարբերաբար լուսաբանում, Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության կանխարգելման համար պատասխանատու մարմինների և կազմակերպությունների՝ հեռուստառադի | Թերթերից, էլեկտրոնային պարբերականներից և գործակալություններից ստացված հարցաշարերին տրվել են պատասխաններ՝ ԿՀԴՊ ԳՎ համապատասխան վարչության կողմից ստացված տեղեկանքների հիման վրա, որոնք տպագրվել և տեղադրվել են խնդրատու ԶԼՄ-ներում (<<Առավոտ>> օրաթերթ, <<news.am>> էլեկտրոնային թերթ, <<Առկա>> գործակալություն և այլն), ինչպես նաև կազմակերպվել են հանդիպումներ համապատասխան ստորաբաժանման ղեկավարի հետ՝ մի քանի հեռատարընկերությունների խնդրանքով (<<Կենտրոն>>, <<Ար>> և այլն):<br>ՀԿԼ վարչության և ԶԼՄ-ների ներկայացուցիչների համագործակցության շրջանակներում, ոստիկանության համապատասխան պաշտոնյաներ տվել են մեկ տասնյակից ավելի հարցազրույցներ թմրամոլության եւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության կանխարգելման թեմաներով, ինչպես նաեւ ՀԿԼ վարչության կողմից պատրաստվել ու տպագիր եւ էլեկտրոնային ԶԼՄ-ներին են տրվել վիճակագրական տվյալներ, որոնց հիման վրա հրապարակվել են թմրամոլության կանխարգելմանն ուղղված հոդվածներ: |

| | | |
|---|---|---|
| | ռհաղորդումներ ին մամուլի ասուլիսներին մասնակցությունը կանոնավոր դարձնելը | |
| **3.4.3** | Հեռուստառադիռհաղորդումների հատուկ շարքի հեռարձակման կազմակերպում՝ ցուցադրելով թեմատիկ տեսահոլովակներ: Մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների օգտագործում՝ թմրամոլության և դրա հասցրած վնասի վերաբերյալ բնակչության իրազեկության | **ՀՀ ոստիկանություն**<br>Կանոնակարգի 3-րդ կետի համաձայն՝ Հայաստանի հանրային հեռուստաընկերության <<02>>, <<Արմենիա>> հեռուստաընկերության <<Հերթապահ մաս>> հաղորդաշարերով և Հանրային ռադիոյի <<02>> ծրագրով 2011 թ. ընթացքում եթեր է հեռարձակվել թմրամոլության հասցրած վնասի վերաբերյալ 2 թեմատիկ տեսանյութ: |

| | | |
|---|---|---|
| | բարձրացման համար | |
| **3.4.4** | Համակարգչային համացանցի հանգույցի ստեղծում և դրանում տեղ գտած՝ Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության դեմ պայքարն արտացոլող նյութերի՝ մշտապես թարմացում | **ՀՀ ոստիկանություն**<br>Թմրամոլության դեմ պայքարն արտացոլող 47 նյութ է տեղադրվել ՀՀ ոստիկանության ինտերնետային կայքում: |
| **3.4.5** | Թմրամոլության հետ կապված հարցերի, դրա դեմ պայքարի մոտեցումների վերաբերյալ լրագրողների իրազեկության | **ՀՀ ոստիկանություն**<br>Առաջիկայում նախապատրաստվում է սեմինար ԶԼՄ-ների ներկայացուցիչների հետ՝ հիմնախնդրի վերաբերյալ լրագրողների իրազեկության բարձրացման նպատակով: |

| | | |
|---|---|---|
| | բարձրացման նպատակով սեմինարների, դասընթացների կազմակերպում | |
| **4. Թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր գործածող անձանց տրամադրվող բժշկական և սոցիալ-հոգեբանական ծառայությունները** | | |
| **Նպատակ 1. Թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր գործածող անձանց վաղ հայտնաբերումը և ուղեգրումը համապատասխան բուժհաստատություններ** | | |
| **4.1. 1** | Թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր գործածող անձանց շրջանում փոխօգնության, խնամքի, աջակցության և կանխարգելման ծրագրեր իրականացնող կազմակերպությունների և նարկոլոգիական | **ՀՀ առողջապահության նախարարություն**<br>4.1.1. կետի՝ Թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր գործածող անձանց շրջանում խնամքի, աջակցության և կախարգելման ծրագրեր իրականացնող բոլոր 3 հասարակական կազմակերպությունների՝ «ՁԻԱՀ-ի կանխարգելում, կրթություն և խնամքէ, «Հակաթմրամոլային քաղաքացիական դաշինքէ և «Իրական աշխարհ, իրական մարդիքէ հասարակական կազմակերպությունների և նարկոլոգիական ծառայություններ մատուցող բժշկական հաստատությունների միջև սերտ համագործակցությունն ապահովված է: Թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր գործածող անձանց շրջանում փոխօգնության ծրագրեր իրականացնող կազմակերպություններ չկան: 2012 թվականին նույնպես կշարունակվի նարկոլոգիական ծառայության սերտ համագործակցությունը այդ կազմակերպությունների հետ: |

| | | |
|---|---|---|
| | ծառայություն մատուցող բժշկական հաստատություն ների (այսուհետ՝ նարկոլոգիական բուժհաստատու թյուններ) միջև սերտ համագործակցո ւթյան ապահովում | |
| **4.1. 2** | Առողջության առաջնային պահպանման հաստատություն ների և նարկոլոգիական բուժհաստատու թյունների միջև սերտ համագործակցո ւթյան ապահովում | **ՀՀ առողջապահության նախարարություն**<br>4.1.2. կետի՝ Առողջության առաջնային պահպանման բժշկական հաստատությունների և նարկոլոգիական ծառայություններ մատուցող բժշկական հաստատությունների միջև սերտ համագործակցությունը ապահովված է՝ նարկոլոգիական բուժհաստատություն ուղեգրված հիվանդների խորհրդատվություն, լաբորատոր-գործիքային հետազոտություն, բուժում և տեղերում խորհրդատվություն ու կազմակերպչական-մեթոդական օժանդակություն ձևաչափով: 2012 թվականին նույնպես կշարունակվի առողջության առաջնային պահպանման բժշկական հաստատությունների և նարկոլոգիական ծառայություններ մատուցող բժշկական հաստատությունների միջև սերտ համագործակցությունը: |

| | | |
|---|---|---|
| | | |
| **4.1. 3** | Սեմինարների, խորհրդակցությունների, ինչպես նաև հատուկ դասընթացների անցկացում՝ թմրամոլությամբ հիվանդ անձանց նկատմամբ խարանի և խտրականության վերացման ուղղությամբ | **ՀՀ առողջապահության նախարարություն**<br>4.1.3. կետի՝ Թմրամոլությամբ հիվանդ անձանց նկատմամբ խարանի և խտրականության վերացման ուղղությամբ անց են կացվել սեմինարներ, խորհրդակցություններ, նաև իրականացվել են հեռուստահաղորդումներ ՀՀ ոստիկանության հետ համատեղ:<br>Սեմինարների, խորհրդակցությունների և հատուկ դասընթացները մշտապես անց են կացվում ՀՀ արդարադատության, կրթության և գիտության նախարարությունների ու ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության հետ համագործակցությամբ: նշված գործընթացը կշարունակվի նաև 2012 թ.-ին: |
| | | **ՀՀ արդարադատության նախարարություն** |
| | | **ՀՀ ոստիկանություն**<br>Համագործակցության առաջարկություններ չեն եղել: |
| | | **ՀՀ կրթության եւ գիտության նախարարություն** |
| **4.1. 4** | Միջոցների ձեռնարկում՝ նարկոլոգիական բուժհաստատություններից դուրս խորհրդատվակ | **ՀՀ ոստիկանություն**<br>Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հոգեբանական կենտրոններ ստեղծելու համար առաջին կատարող է ճանաչվել ՀՀ ոստիկանությունը՝ ինչը ոստիկանության իրավասության մեջ չի մտնում, ուստի մշակվել և ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 10-ի թիվ 820-Ն որոշմամբ առաջին կատարող է ճանաչվել ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը: |

| | | |
|---|---|---|
| | ան և հոգեբանական աջակցության կենտրոններ հիմնելու համար: Այդ կենտրոնները պետք է ապահովեն թմրամոլության հետ կապված կամավոր խորհրդատվություն, հոգեբանական աջակցություն, անհրաժեշտության դեպքում` նաև ուղեգրեն համապատասխան նարկոլոգիական բուժհաստատություններ | **ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն**<br>Ի կատարումն ժամանակացույցի 4-րդ բաժնի Նպատակ 1-ի 4.1.4 և 4.1. 5 կետերի պահանջների` ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, կարևորելով թմրամոլության հակում ունեցող անձանց համար վերականգնողական ծրագրի, մասնավորապես սոցիալ-հոգեբանական և խորհրդատվական աջակցության ծառայություններ մատուցող վերականգնողական կենտրոնների ստեղծումը, ծանոթացել է մի շարք երկրների փորձին:<br>Հանդիպումներ են անցկացվել Հայաստանի Հանրապետությունում նշված ոլորտում գործունեություն ծավալող մի քանի կազմակերպությունների նախագահների հետ /<<Հակաթմրամոլային քաղաքացիական դաշինք>> հ/կ, <<Հանրային տեղեկատվության և գիտելիքի կարիք>> հ/կ, <<Հայկական հոգեբուժական ասոցիացիա>> հ/կ, “Կոֆոեղ” հիմնադրամ /:<br>Թմրամոլության հակում ունեցող անձանց համար սոցիալ-հոգեբանական ու խորհրդատվական աջակցության ծառայություններ մատուցող վերականգնողական կենտրոնները կարող են մեծ դեր ունենալ թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր գործածող անձանց հետագա բուժման, սոցիալական վերականգնման` թմրամիջոցներից ու հոգեմետ նյութերից կախվածությունից ազատվելու և բնականոն կյանքին վերադառնալու համար:<br>Թմրամոլության հակում ունեցող անձանց մասնագիտական կամավոր խորհրդատվությունը, նրանց հոգեբանական աջակցություն տրամադրելն ու հասարակական կյանքում ներառելը, աշխատանքով և այլ միջոցներով ապահովումը, իսկ անհրաժեշտության դեպքում` |

| | | |
|---|---|---|
| | | մասնագիտացված բուժհաստատություններ ուղղորդումն ունի համակարգման անհրաժեշտություն:<br>Թմրամոլության հակում ունեցող անձանց վերականգնողական փորձնական ծրագիր մշակելու համար ստեղծվել է աշխատանքային խումբ: Ծրագրի մշակման աշխատանքներում ներգրավվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ առողջապահության, ՀՀ կրթության և գիտության, ՀՀ տարածքային կառավարման նախարարությունների ու թմրամոլության դեմ պայքարի ոլորտում ակտիվ գործող հասարական կազմակերպությունների ներկայացուցիչներ:<br>Աշխատանքային խմբի կողմից մշակվել և ՀՀ ազգային անվտանգության խորհուրդ է ներկայացվել թմրամոլության հակում ունեցող անձանց վերականգնողական փորձնական ծրագրի նախագիծը:<br>Ծրագիրն իր մեջ պարունակում է՝<br>- թմրամիջոցների օգտագործումը դադարեցրած անձանց շրջանում հետազոտության, նրանց անհատական կարիքների ուսումնասիրման, հիմնական խնդիրների վերհանման աշխատանքների իրականացում,<br>- առաջարկություն՝ համապատասխան շենքային պայմաններ ունեցող կազմակերպության բազայի վրա թմրամոլության հակում ունեցող անձանց վերականգնողական կենտրոն ստեղծելու վերաբերյալ, որտեղ հոգեբանական աջակցության, սոցիալական աշխատանքի հետ մեկտեղ նախատեսվում է մասնագիտական ուսուցում, ապա՝ աշխատատեղերի ստեղծում: |
| **4.1.5** | Թմրամիջոցներ կամ հոգեմետ | **ՀՀ առողջապահության նախարարություն**<br>4.1.5. կետի՝ Թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր գործածող անձանց |

| | | |
|---|---|---|
| | նյութեր գործածող անձանց շրջանում խորհրդատվական և սոցիալ-հոգեբանական աջակցության, նրանց բուժման և վերականգնման ծրագրերի բոլոր փուլերում հասարակական կազմակերպությունների ներգրավման ապահովում | շրջանում խորհրդատվական և սոցիալ-հոգեբանական աջակցության, նրանց բուժման և վերականգնման ծրագրերի բոլոր փուլերում ներգրավված են «ՁԻԱՀ-ի կանխարգելում, կրթություն և խնամքե, «Հակաթմրամոլային քաղաքացիական դաշինքե և «Իրական աշխարհ, իրական մարդիկե հասարակական կազմակերպություն:<br><br>**ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն**<br>Տես 4.1.4 կետ |
| **Նպատակ 2. Թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր գործածող անձանց ժամանակակից և գիտականորեն հիմնավորված բուժման, վերականգնման և վնասի նվազեցման ծառայությունների տրամադրումը** | | |
| **4.2.1** | Միջոցների ձեռնարկում՝ նարկոլոգիական բուժհաստատու | **ՀՀ առողջապահության նախարարություն**<br>4.2.1. կետի՝ 2010 թվականին նարկոլոգիական կլինիկային ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրվել է վերակենդանացման հավաքածու ու արհեստական շնչառության |

| | | |
|---|---|---|
| | թյունների հիվանդանոցայի ն պայմանների բարելավման և համապատասխ ան բուժսարքավորո ւմներով համալրման համար | ապարատ և Բաց հասարակական ինստիտուտի օժանդակությամբ հիմնովին վերանորոգվել է մեթադոնային փոխարինող բուժման բաժանմունքը, 2011 թվականին ՄԱԿ-ի աջակցությամբ շահագործման է հանձնվել նոր կաթսայատուն: 2012 թվականի նախատեսված է 1 նարկոլոգիական բաժանմունքի վերանորոգում: |
| **4.2. 2** | Միջոցների ձեռնարկում՝ նարկոլոգիայի ոլորտի մասնագետներ պատրաստող հաստատություն ների գիտական և կրթական մակարդակի բարձրացման համար | **ՀՀ առողջապահության նախարարություն**<br>4.2.2. կետի՝ Նարկոլոգիայի ոլորտի մասնագետներ պատրաստող ամբիոնի աշխատակիցների գիտական և կրթական մակարդակի բարձրացումը մշտապես իրականացվում է պրոֆեսորական կազմի կողմից սեմինարների միջոցով: |
| | | **ՀՀ կրթության եւ գիտության նախարարություն** |
| **4.2. 3** | Նարկոլոգիայի ոլորտի | **ՀՀ առողջապահության նախարարություն**<br>4.2.3. կետի՝ Նարկոլոգիական ոլորտի բժիշկների և միջին |

| | | |
|---|---|---|
| | բժիշկների և միջին բուժանձնակազմի պատշաճ շարունակական կրթության, մասնագիտացման և վերապատրաստումների ապահովում | բուժանձնակազմի, ինչպես նաև այլ բժշկական մասնագիտությունների, պատշաճ մասնագիտացումը և շարունակական կրթությունը ¥վերապատրաստումը¤ իրականացվում է Առողջապահության ազգային ինստիտուտի կողմից ըստ գործող կարգի՝ 5 տարին մեկ: 2012 թվականին կիրականացվի նույն կարգով: |
| | | **ՀՀ կրթության եւ գիտության նախարարություն** |
| **4.2.4** | Հոգեբաններ և սոցիալական ոլորտի աշխատողներ պատրաստող և (կամ) վերապատրաստում ապահովող գիտակրթական հաստատությունների կողմից համապատասխան | **ՀՀ առողջապահության նախարարություն**<br>4.2.4. կետի՝ Նարկոլոգիական և վնասի նվազեցման ծրագրերը համագործակցում են հոգեբաններ և սոցիալական աշխատողներ պատրաստող գիտակրթական հաստատությունների հետ և համալրված են հոգեբաններով և սոցիալական աշխատողներով: |
| | | **ՀՀ կրթության եւ գիտության նախարարություն** |

| | | |
|---|---|---|
| | մասնագետների ՝ նարկոլոգիական և վնասի նվազեցման ծրագրեր իրականացնող կազմակերպություններ ուղեգրման ապահովում | |
| **4.2.5** | Նարկոլոգիական բուժհաստատությունների կողմից բուժման տարբեր ձևերի և (կամ) մեթոդների կիրառման (ապաթունավորում, ավանդական, փոխարինող և հոգեթերապևտի | **ՀՀ առողջապահության նախարարություն**<br>4.2.5. կետի՝ Նարկոլոգիական ծառայությունը տրամադրում է բուժման առաջատար բոլոր մեթոդները, բացի գերարագ ապաթունավորման մեթոդից: 2010 թվականի ներդրվեց առաջատար ափիոնային թմրամոլության փոխարինող բուժում մեթադոնով մեթոդը, իսկ 2012 թվականի 1-ին կիսամյակում կներդրվի գերարագ ապաթունավորման մեթոդը: |

| | | |
|---|---|---|
| | կ բուժում) ապահովում | |
| **4.2.6** | Ներարկային թմրամիջոց գործածող անձանց շրջանում վնասի նվազեցման ծրագրերի լիարժեք իրականացման (երակների խնամք, գերդոզավորումների կանխարգելում, արյան միջոցով փոխանցվող վարակների կանխարգելում և այլն) ապահովում, համապատասխան չափորոշիչների, | **ՀՀ առողջապահության նախարարություն**<br>4.2.6. կետի՝ 2010 և 2011 թվականներին կատարված է «ՁԻԱՀ-ի կանխարգելում, կրթություն և խնամքե, «Հակաթմրամոլային քաղաքացիական դաշինքե և «Իրական աշխարհ, իրական մարդիկե հասարակական կազմակերպությունների և նարկոլոգիական ծառայություններ մատուցող բժշկական հաստատությունների համագործակցությամբ: 2012 թվականին նույնպես կշարունակվի ներարկային թմրամիջոց գործածող անձանց շրջանում վնասի նվազեցման ծրագրերի իրականացում՝ այդ կազմակերպությունների հետ համագործակցությամբ: |

| | | |
|---|---|---|
| | ուղեցույցների մշակում | |
| **4.2.7** | Սույն որոշմամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 1-ի «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագիրը հաստատելու մասինե N 398-Ն որոշմամբ հաստատված՝ ներարկային թմրամիջոց գործածողների շրջանում վնասի նվազեցման միջոցառումներ իրականացնելիս | **ՀՀ առողջապահության նախարարություն**<br>4.2.7. կետի՝ 2010 և 2011 թվականներին կատարված է «ՁԻԱՀ-ի կանխարգելում, կրթություն և խնամքե, «Հակաթմրամոլային քաղաքացիական դաշինքե և «Իրական աշխարհ, իրական մարդիկե հասարակական կազմակերպությունների և նարկոլոգիական ծառայություններ մատուցող բժշկական հաստատությունների համագործակցությամբ: 2012 թվականին նույնպես կշարունակվի ներարկային թմրամիջոց գործածող անձանց շրջանում վնասի նվազեցման ծրագրերի իրականացում՝ այդ կազմակերպությունների հետ համագործակցությամբ: |

| | | |
|---|---|---|
| | ՝ սերտ համագործակցության ապահովում | |
| **4.2.8** | Ներարկային թմրամիջոց գործածողների շրջանում վնասի նվազեցման ծրագրեր իրականացնող կազմակերպությունների ներուժի զարգացում՝ այդ ծրագրերի արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով | **ՀՀ առողջապահության նախարարություն**<br>4.2.8. Ներարկային թմրամիջոց գործածող անձանց շրջանում վնասի նվազեցման ծրագրերի իրականացնող կազմակերպությունների ներուժը զարգացած է: 2012 թվականին, կարիք առաջանալու դեպքում, կզարգացվի այդ կազմակերպությունների ներուժը: |
| **4.2.9** | Պալիատիվ խնամքին առնչվող կարիքների գնահատման նպատակով | **ՀՀ առողջապահության նախարարություն**<br>4.2.9. կետի՝ Պալիատիվ խնամքի իրավական կարգավորման նպատակով ընդունվել են ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի N 175-Ն որոշումը, որով սահմանվել են պալիատիվ խնամքի համար պարտադիր տեխնիկական և մասնագիտական որակավորման պահանջները: |

| | | |
|---|---|---|
| | երկրում առկա իրավիճակի վերլուծության իրականացում և դրա արդյունքների հիման վրա Հայաստանի Հանրապետու-թյունում պալիատիվ խնամքի խթանման, դրա իրավական կանոնակարգման ու հետագա զարգացման ուղղությամբ միջոցների ձեռնարկում | **ՀՀ արդարադատության նախարարություն**<br>**ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն** |
| **4.2. 10** | «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» | **ՀՀ առողջապահության նախարարություն**<br>4.2.10. կետի՝ Մշակվել և շրջանառության մեջ է դրվել Թմրամիջոցների և հոգեներգործուն (հոգեմետ) նյութերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը, որը կարծիքների ամփոփման փուլում է: |

| | | |
|---|---|---|
| | Հայաստանի Հան-րապետության օրենքում, իսկ անհրաժեշտությ ան դեպքում՝ նաև այլ իրավական ակտերում համապատասխ ան փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկությու ն-ներ ներկայացնելը | Նախագիծը կանոնակարգում է բժշկական նպատականերով թմրամիջոցների և հոգեմետ նյութերի շրջանառությունը: Ի կատարումն ժամանակացույցի 4.2.10 կետի պահանջների՝ մասնակցել ենք 2011 թվականի փետրվարի 24-ի “Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 1936-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին” թիվ 175-Ն և “Հայաստանի Հանրապետությունում պալիատիվ /ամոքիչ/ բժշկական օգնության հայեցակարգին և հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին” ՀՀ կառավարության որոշումների մշակման աշխատանքներին: Նաև ներկայացվել է առաջարկություններ «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի N 1523-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասինե Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծերի վերաբերյալ: /ՀՀ աշխատանքի նախ./ |
| | | **ՀՀ արդարադատության նախարարություն** |
| | | **ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն** |
| **Նպատակ 3. Թմրամիջոցներից կամ հոգեմետ նյութերից կախվածությամբ անձանց հետբուժական սոցիալական վերաինտեգրումը** | | |

| | | |
|---|---|---|
| **4.3. 1** | Տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքային կազմակերպությունների կողմից իրականացվելիք՝ թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր գործածող անձանց համար նախատեսված սոցիալական աջակցության և զբաղվածության ծրագրերի մշակում | **ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն**<br>ՀՀ Ազգային ժողովի կողմից ս/թ հունվարի 15-ից ուժի մեջ է մտել <<Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքը, որտեղ ի թիվս այլ փոփոխությունների, աշխատաշուկայում անմրցունակ համարվող խմբերում ընդգրկվել են նաև նարկոլոգիական ծառայությունում հաշվառված անձինք, որոնք գտնվում են դադարի (ռեմիսիայի) շրջանում:<br>Արդյունքում, նշված անձանց հնարավորություն է տրվել ընդգրկվելու զբաղվածության կարգավորման պետական ծրագրերում՝ ընդլայնելով նրանց աշխատանքի տեղավորման հնարավորությունը:<br>Համաձայն ՀՀ կառավարության 2010թ. հունիսի 3-ի նիստի N 17 արձանագրային որոշման, հանրապետությունում ներդրվում է ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգ, որով կապահովվի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, այդ թվում նաև թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր գործածող անձանց ու նրանց ընտանիքներին, սոցիալական կարիքներին համապատասխան համալիր ծառայությունների տրամադրումը: |
| | | **ՀՀ տարածքային կառավարման նախարարություն**<br>Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թվականի հուլիսի 15-ի «2010-2012 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ծրագրով նախատեսված միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասինե |

| | | |
|---|---|---|
| | | N 892-Ն որոշման հավելվածի 4.3.1 կետի պահանջի հայտնում ենք. ՀՀ Ազգային ժողովի կողմից 2011թվականի հունվարի 15-ից ուժի մեջ է մտել <<Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքը, որտեղ ի թիվս այլ փոփոխությունների, աշխատաշուկայում անմրցունակ համարվող խմբերում ընդգրկվել են նաև նարկոլոգիական ծառայությունում հաշվառված անձինք, որոնք գտնվում են դադարի (ռեմիսիայի) շրջանում: Արդյունքում, նշված անձանց հնարավորություն է տրվել ընդգրկվելու զբաղվածության կարգավորման պետական ծրագրերում՝ ընդլայնելով նրանց աշխատանքի տեղավորման հնարավորությունը: Միաժամանակ հայտնում ենք, որ ներկայումս ՀՀ աշխատանքին սոցիալական հարցերի նախարարության կողմից մշակման փուլում է գտնվում <<Թմրամոլության հակում ունեցող անձանց սոցիալ-վերականգնողական ծրագիրը>>: |
| **<u>5. Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կանխումը</u>** | | |
| **<u>Նպատակ 1.</u> Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի առաջարկի կանխումը** | | |
| **5.1.** | «Պետական | **ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն** |

| | | |
|---|---|---|
| **1** | սահմանի մասին, Հայաստանի Հանրապետության օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան սահմանային արդյունավետ վերահսկողության ապահովում, ինչպես նաև սահմանների համալիր կառավարման ծրագրերի իրականացում՝ Հայաստանի Հանրապետություն թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց | **ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե**<br>5.1.1 - Միջոցառման կատարումն ապահովվում է ՀՀ Նախագահի 2010 թվականի նոյեմբերի 3-ի կարգադրությամբ հաստատված Հայաստանի Հանրապետության սահմանային անվտանգության ապահովման և պետական սահմանի համալիր կառավարման ռազմավարությամբ: Բացի այդ ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 21-ի թիվ 482-Ն որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության սահմանային անվտանգության և պետական սահմանի համալիր կառավարմանն ուղղված 2011-2015 թվականների միջոցառումների ծրագիրը, որով միջոցառումներ են նախատեսված տեխնիկական վերազինման, մասնագիտական վերապատրաստման, ինչպես նաև միջգերատեսչական համագործակցության շնորհիվ թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի ներմուծման կանխարգելման ուղղությամբ: |

| | | |
|---|---|---|
| | պրեկուրսորներ ի ապօրինի ներմուծումը կանխելու նպատակով | |
| **5.1. 2** | Օտարերկրյա պետությունների ց Հայաստանի Հանրապետությ ուն թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորներ ի ապօրինի ներմուծումը կանխելու և նշված ոլորտում սերտ փոխգործակցու թյուն ապահովելու նպատակով համապատաս- | **ՀՀ արտաքին գործերի նախարարություն**<br>Նշված ժամանակահատվածում ակտիվ և արդյունավետ շարունակվել է համագործակցությունը ՄԱԿ-ի Թմրանյութերի և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գրասենյակի հետ:<br>Հաշվետու շրջանում ՄԱԿ-ի թմրանյութերի և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գրասենյակ ներկայացվել են ՀՀ համապատասխան գերատեսչությունների կողմից լրացված թմրանյութերի վերաբերյալ 2011թ. համար նախատեսված ամենամյա հարցաշարը, ինչպես նաև ՄԱԿ-ի թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի 1988թ. կոնվենցիայի աղյուսակ 1-ում և աղյուսակ 2-ում նշված նյութերի վերաբերյալ 2011թ. տեղեկատվությունը: ՀՀ ոստիկանության համակարգմամբ ներկայացվել են 2011թ. ընդգրկող ՄԱԿ-ի հանցավորության միտումների վերաբերյալ հարցարանը և պարբերաբար զեկույցներ երկրում թմրադեղերի անօրինական առք ու վաճառքի վերաբերյալ:<br>2011թ. մարտի 21-25-ը Վիեննայում կայացել է ՄԱԿ-ի թմրամիջոցների դեմ պայքարի հանձնաժողովի 54-րդ նստաշրջանը, որին մասնակցել է Վիեննայում ՀՀ մշտական ներկայացուցչության դիվանագետը՝ ՀՀ ոստիկանության ներկայացուցչի մասնակցության անհնարինության պատճառով: |

| | | |
|---|---|---|
| | խան միջպետական համաձայնագրեր կնքելու ուղղությամբ միջոցների ձեռնարկում | 2011թ. հունիսի 15-17-ը ՀՀ ԿԱ ՊԵԿ մասնագետը մասնակցել է Ստրասբուրգում կայացած Եվրոպական օդանավակայաններում և քաղաքացիական ավիացիայում թմրանյութերի հսկողության ծառայությունների համագործակցության խմբի ամենամյա հանդիպմանը, որը կազմակերպվել էր ԵԽ Պոմպիդու խմբի կողմից:<br>2011թ. սեպտեմբերին Բրյուսելում կայացավ ԵՄ-ում և Արևելյան գործընկերության երկրներում, մասնավորապես ՀՀ-ում, թմրանյութերի իրավիճակի վերաբերյալ երկխոսությունը ՀՀ ոստիկանության և ՀՀ ԿԱ ՊԵԿ ներկայացուցիչների մասնակցությամբ:<br>2011թ. սեպտեմբերի 29-30-ը Կիևում ՀՀ առողջապահության, արդարադատության, արտաքին գործերի նախարարությունների և ոստիկանության ներկայացուցիչները մասնակցեցին ԵՄ Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում թմրանյութերի օգտագործման պատճառով ինֆեկցիոն հիվանդությունների մոնիթորինգի և դրանց բուժման վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման կարևորության մասին Թմրամոլության և թմրանյութերի վերահսկման եվրոպական կենտրոնը կազմակերպված գիտական սեմինարին: |
| | | **ՀՀ ոստիկանություն**<br>Ի կատարումն Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության անդամ պետությունների հավաքական անվտանգության Խորհրդի 2008 թվականի սեպտեմբերյան որոշման և ՀԱՊԿ անդամ պետությունների թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի իրավասու մարմինների ղեկավարների համակարգող Խորհրդի 2011թ. հիմնական միջոցառումների պլանի 3-րդ |

| | | |
|---|---|---|
| | | կետի համաձայն 2011թ. դեկտեմբերի 6-ից ժամը 00:00-ից մինչև դեկտեմբերի 12-ը ժամը 14:00-ն անց է կացվել «Կանալ-2011» համալիր օպերատիվ-կանխարգելիչ միջոցառումը, որի նպատակն էր կանխել մաքսանենգ ճանապարհով աֆղանական ափիոնի ներթափանցումը դեպի եվրասիական տարածաշրջանի պետություններ, այդ թվում Կասպից եւ Սեւ ծովերի ջրային տարածքներով, պրեկուրսորների ապօրինի ներթափանցումը Աֆղանստան, սինթետիկ թմրամիջոցների ներթափանցումը Եվրոպայից, ինչպես նաեւ թմրամիջոցների ապօրինի շրջանառությունից ստացված եկամուտների օրինականացման դեպքերը կանխելը եւ ապօրինի շրջանառությունից զենք, զինամթերք ու պայթուցիկ նյութեր հայտնաբերելը:<br>Միջոցառումն իրականացվել է երեք հերթափոխով, շուրջօրյա, ուժեղացված ծառայությունով:<br>Միջոցառման ընթացքում ստուգման են ենթարկվել օդանավակայաններում՝<br>-264 չվերթի 20361 ուղևորի /որից 7683-ը օտարերկրացի/ 339 տոննա 815 կգ ուղեբեռ,<br>երկաթգծի կայարանում՝<br>-43 բեռնատար և 6 մարդատար գնացքի 404 ուղևորի ուղեբեռ,<br>մայրուղիներում, քաղաքներում և շրջանցիկ հատվածներում՝<br>-17796 տրանսպորտային միջոցներ, 58738 ուղևոր /որից 15529-ը օտարերկրացի/:<br>Արդյունքում հայտնաբերվել է թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործության 10 դեպք /քրեական պատասխանատվության է ենթարկվել 11 անձ/: Ապօրինի |

| | | |
|---|---|---|
| | | շրջանառությունից հայտնաբերվել և առգրավվել է ընդհանուր առմամբ 230,7 գր տարբեր տեսակի թմրամիջոց, որից՝ ացետիլացված ափիոն՝ 206,2 գր, մարիխուանա՝ 24,5 գր, 18 հատ հոգեմետ դեղահաբ:<br>Բացի վերոհիշյալը բացահայտվել է տարբեր հանցագործությունների 54 դեպք, առգրավվել է 7 հատ հրազեն, 9 հատ որսորդական հրացան, 3 ականանետ, 9 հատ ատրճանակ, 1 գազային ատրճանակ, 2 հատ սառը զենք, 37 հատ նռնակ, 20193 հատ տարբեր տրամաչափի փամփուշտ, 15 հատ պահունակ, 1400 գր պայթուցիկ նյութ: Հայտնաբերվել է հետախուզման մեջ գտնվող 30 անձ: Առգրավվել է 1269 ԱՄՆ դոլարին համարժեք փոխադրմանը արգելված նյութական իրեր: |
| | | **ՀՀ առողջապահության նախարարություն** |
| | | **ՀՀ արդարադատության նախարարություն** |
| **5.1.3** | Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների վերահսկելի մատակարարումների և հսկիչ գնումների իրականացման կարգը, ինչպես | **ՀՀ դատախազություն** |
| | | |
| | | **ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե**<br>5.1.3 - ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի համապատասխան ստորաբաժանումները ԱՊՀ անդամ երկրների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի իրավապահ ստորաբաժանումների ղեկավարների կոմիտեի շրջանակներում ակտիվ համագործակցում են ԱՊՀ անդամ երկրների մաքսային ծառայությունների, ինչպես նաև ՀՀ այլ գերատեսչությունների հետ՝ թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների |

| | | |
|---|---|---|
| | նաև նշված նյութերի բռնագրավման համակարգը կանոնակարգող իրավական ակտերի մշակում եւ ընդունում | վերահսկելի մատակարարումներ իրականացնելու և այդ միջոցառումների արդյունքում իրավական ակտերի մշակման և ընդունման նպատակով: ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի և ՀՀ Ոստիկանության պետի համատեղ հրամանով «Զվարթնոցե օդանավակայանում ստեղծվել է Թմրամիջոցների դեմ պայքարի պրոֆիլավորման միջգերատեսչական աշխատանքային խումբ: |
| | | **ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն** |
| | | **ՀՀ առողջապահության նախարարություն** |
| | | **ՀՀ արդարադատության նախարարություն** |
| **5.1.4** | Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների հետ կապված գործունեությանն առնչվող հաշվետվողական և այդ գործունեության գրանցման համակարգը | **ՀՀ դատախազություն** |
| | | **ՀՀ ոստիկանություն**<br>Հայաստանի Հանրապետությունում թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի արտադրություն կամ պատրաստում, արտահանում կամ ներմուծում գործունեությունների իրականացման լիցենզավորման կարգերը եւ ձեւերը կարգավորված էր Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1656-Ն որոշմամբ:<br>Նշված որոշումով հաստատված լիցենզավորման կարգերը եւ ձեւերը փոփոխությունների եւ լրամշակվելու կարիք ունեին՝ դրանք պարզեցնելու եւ համակարգելու: Հիշյալ գործընթացը կազմակերպելու եւ իրականացնելու համար ՀՀ առողջապահության նախարարության կողմից ստեղծվել է աշխատանքային խումբ, որում ընդգրկվել է նաեւ ՀՀ |

| | | |
|---|---|---|
| | կատարելագործող իրավական ակտերի մշակում եւ ընդունում, գործող ակտերում անհրաժեշտ փոփոխությունների կատարում | ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ թմրաբիզնեսի եւ թրաֆիքինիգի դեմ պայքարի վարչության աշխատակիցը:<br>Նշված աշխատանքային խմբի կողմից մշակվել եւ շահագրգիռ գերատեսչությունների քննարկմանն է ներկայացվել <<Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված՝ դրանց պրեկուրսորների արտադրության, արտահանման, ներմուծման կամ մեծածախ առեւտրի իրականացման լիցենզավորման կարգերը եւ այդ գործունեությունների իրականացման լիցենզիաների ձեւերը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը լրամշակելուց հետո ընդունվել է ՀՀ կառավարության 2011թ. մարտի 18-ի թիվ 281-Ն որոշմամբ:<br>Հիշյալ որոշման 3-րդ կետով ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1656-Ն որոշումը: |
| | | **ՀՀ առողջապահության նախարարություն** |
| | | **ՀՀ արդարադատության նախարարություն** |
| **5.1.5** | Օրինական շրջանա-ռությունից դեպի ապօրինի շրջանառություն թմրամիջոցների, | **ՀՀ դատախազություն** |
| | | **ՀՀ ոստիկանություն**<br>ՀՀ ոստիկանության կողմից նախապատրաստվել է <<Ոստիկանական պահպանության մասին>> ՀՀ օրենքի նախագիծ, որով սահմանվել է, որ <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքով նախատեսված՝ |

| | | |
|---|---|---|
| | հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորներ ի հոսքի կանխումը կանոնակարգող իրավական ակտերի կատարելագործ ում | <<Անվտանգության բնագավառում>> գործունեություն իրականացնող առնտրային կազմակերպությունների /այդ թվում՝ թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դրանց պրեկուրսորների արտադրություն, թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դրանց պրեկուրսորների ներմուծում, արտահանում կամ մեծածախ առնտուր իրականացնող կազմակերպությունների/ գույքը ենթակա է միայն ոստիկանական պահպանության:<br>Հայաստանի Հանրապետությունում օրինական շրջանառության մեջ գտնվող դեղամիջոցների, որոնք իրենց բաղադրության մեջ պարունակում են <<կոդեին>> տեսակի թմրամիջոց, հոսքը դեպի ապօրինի շրջանառություն կանխելու նպատակով ՀՀ ոստիկանության կողմից մշակվել է ՀՀ կառավարության <<ՀՀ կառավարության 2033 թվականի օգոստոսի 21-ի թիվ 1129-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին>> որոշման նախագիծ:<br>ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 1646-Ն <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 21-ի թիվ 1129 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին>> որոշմամբ <<կոդեին>> տեսակի դեղամիջոցները ընդգրկվել են թիվ 3 ցուցակում:<br><<Թմրամիջոցների եւ հոգեմետ /հոգեներգործուն/ նյութերի մասին>> ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի /թմրամիջոցների եւ հոգեմետ /հոգեներգործուն/ նյութերի ներմուծումն ու արտահանումը/ պահանջների համաձայն թմրամիջոցների եւ հոգեմետ /հոգեներգործուն/ նյութերի եւ դրանց |

| | | |
|---|---|---|
| | | պատրաստուկների արտահանումն ու ներմուծումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից տրված եւ ՄԱԿ-ի թմրամիջոցների հանձնախմբի կողմից հաստատված նմուշի ձեւաթղթի վրա լրացված հավաստագրով:<br>Անդրկովկասում թմրամիջոցների դեմ պայքարի ծրագրի շրջանակներում <<Օդանավակայաններում թմրամիջոցների դեմ պայքարի պրոֆիլավորման>> բաժնի հնարավորությունների օգտագործման ուղղությամբ ՀՀ ոստիկանության կողմից մշակվել և շրջանառության մեջ է դրվել <<Զվարթնոց>> օդանավակայանում թմրամիջոցների դեմ պայքարի պրոֆիլավորման միջգերատեսչական աշխատանքային խումբ ստեղծելու մասին>> ՀՀ ոստիկանության պետի, ՀՀ ԱԱ ծառայության տնօրենի և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի համատեղ հրամանի նախագիծը: ՀՀ ԱԱԾ-ից գրություն է ստացվել հիշյալ խմբում ՀՀ ԱԱԾ աշխատակցի ընդգրկման ոչ նպատակահարմարության մասին, իսկ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից առաջարկություն է ներկայացվել համատեղ հրամանով հաստատել նաև խմբի աշխատակիցների կազմը և գործառույթները: ՀՀ ոստիկանության կողմից լրամշակվել է երկու գերատեսչությունների նոր համատեղ հրամանի նախագիծ, որը դրվել է շրջանառության մեջ՝ վերջնական կարծիք ստանալու նպատակով:<br>ՀՀ ոստիկանության պետի և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի կողմից 2011թ. փետրվարի 7-ին ստորագրված թիվ 287-Ա/37-Ա համատեղ հրամանով ստեղծվել է «Զվարթնոցե |

| | | |
|---|---|---|
| | | օդանավակայանում թմրամիջոցների դեմ պայքարի պրոֆիլավորման միջգերատեսչական աշխատանքային խումբ, հաստատվել է խմբի կազմը ու գործառույթները: Աշխատանքներ են տարվում համապատասխան աշխատակիցների ընտրության և գործուղման ուղղությամբ: |
| | | **ՀՀ առողջապահության նախարարություն** |
| | | **ՀՀ արդարադատության նախարարություն** |
| **5.1.6** | Ազատությունից զրկված անձանց շրջանում թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորներ ի ապօրինի շրջանառության կանխման միջոցառումներ ի ակտիվացում | **ՀՀ արդարադատության նախարարություն** |
| | | **ՀՀ ոստիկանություն**<br>ՀՀ ոստիկանության կողմից մշակվել և շահագրգիռ գերատեսչությունների քննարկմանն է ներկայացվել <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշման մեջ լրացում և 2011 թվականի ապրիլի 21-ի թիվ 618-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով նախատեսվում է ազատազրկման վայրերում թմրակախվածության համար հարկադիր բուժում անցնող, ինչպես նաև դիսպանսերային հսկողության տակ գտնվող թմրամոլների վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը՝ ՀՀ ոստիկանությանը:<br>ՀՀ կառավարության 2011թ. նոյեմբերի 3-ի թիվ 1564-Ն որոշմամբ հաշվառված և (կամ) հաշվառումից հանված՝ հոգեներգործուն նյութերից կախվածություն և հակում ունեցող անձանց մասին տեղեկությունները |

| | | |
|---|---|---|
| | | Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության կողմից յուրաքանչյուր ամիս տրամադրվում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը: ՀՀ ԱՆ ՔԿՎ օպերատիվ բաժնի աշխատակցի հետ պայմանավորվածություն է ձեռքբերվել մշակելու համատեղ հրամանի նախագիծ, որով կկարգավորվի հաշվետվություն ներկայացնելու ձևը եւ կարգը:<br>Հիշյալ գործընթացով կկանոնակարգվի ազատազրկման վայրերում թմրակախվածության համար հարկադիր բուժում անցնող, ինչպես նաև դիսպանսերային հսկողության տակ գտնվող թմրամոլների վերաբերյալ տեղեկությունները ՀՀ ոստիկանությանը տրամադրելու գործընթացը, որով կնվազեցվի թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների ապօրինի հոսքը քրեակատարողական հիմնարկներ: |
| **5.1.7** | Զինծառայողներ ի շրջանում թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուր-սորների ապօրինի շրջանա-ռության կանխման | **ՀՀ պաշտպանության նախարարություն**<br>2011 թվականի ընթացքում իրականացվել են հետևյալ միջոցառումները.<br>1. ձեռնարկված օպերատիվ կանխարգելիչ գործողությունների շնորհիվ հայտնաբերվել է թմրանյութի օգտագործման 14 դեպք, որից 8-ով հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածի հատկանիշներով, իսկ 6-ով մերժվել է քրեական գործի հարուցումը: Հարուցված քրեական գործերից թվով 3-ը ուղարկվել են դատական քննության, իսկ թվով 5-ը գտնվում են նախաքննության փուլում,<br>2. ՀՀ ՊՆ զորամասերում իրականացվել են օպերատիվ- |

| | | |
|---|---|---|
| | միջոցա-ռումների ակտիվացում | հետախուզական ծրագրային և պլանավորված միջոցառումներ զինծառայողների կողմից թմրանյութերի ձեռք բերման աղբյուրները հայտնաբերելու, զորամասեր ներմուծելու և օգտագործման փաստերը կանխելու ուղղությամբ,<br>3. թմրանյութերի նկատմամբ հակում ունեցող, ինչպես նաև այն տարածող զինծառայողները վերցվել են համապատասխան հաշվառման և կազմվել ու անցկացվել են հսկողական վարույթներ,<br>4. թմրամոլությունը կանխարգելելու նպատակով զորամասերում զինծառայողների շրջանում անցկացվել են պրոֆիլակտիկ-դաստիարակչական բնույթի դասախոսություններ,<br>5. նախապես ուսումնասիրվել են տարածքային զինկոմիսարիատների կողմից կազմված զորակոչի ենթակա անձանց ցուցակները, կայազորային ՌՈ բաժինների աշխատակիցների միջոցով պարզվել են այդ քաղաքացիների հաշվառման վայրի /բնակավայրի/ ՀՀ ոստիկանության բաժինների և ՀՀ առողջապահության նախարարության նարկոլոգիական դիսպանսերի հաշվառումներով անցնելու դեպքերը, նրանց նկատմամբ ձեռնարկվել են անհատական պրոֆիլակտիկ դաստիարակչական բնույթի միջոցառումներ,<br>6. խիստ հսկողություն է սահմանվել ՀՀ ՊՆ բժշկական հիմնարկներում և զորամասերի բուժ. կետերում թմրամիջոց հանդիսացող կամ ցավազրկող դեղորայքի բաշխման, օգտագործման և պահպանման նկատմամբ,<br>7. զորամասերի հրամանատարության հետ ձեռնարկվել են օպերատիվ-հետախուզական համատեղ միջոցառումներ զորամասերի հարակից տարածքներում թմրանյութ պարունակող տարբեր տեսակի |

| | | |
|---|---|---|
| | | բույսերի հայտնաբերման և ոչնչացման ուղղությամբ: |
| **5.1.8** | Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորներ ի ապօրինի շրջանառությունից ստացված եկամուտների օրինականացման կանխմանն ուղղված միջոցների անշեղ իրացման ապահովում | **ՀՀ դատախազություն** |
| | | **ՀՀ ոստիկանություն**<br>ՀՀ ոստիկանության եւ ՀՀ կենտրոնական բանկի ՖԴԿ-ի միջեւ 2008թ. ապրիլին կնքվել է փոխըմբռնման համաձայնագիր, որով ՖԴԿ-ն եւ ոստիկանությունը համաձայնվում են համագործակցել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված խնդիրների եւ լիազորությունների իրականացման նպատակով:<br>Վերը նշված համաձայնագրի շրջանակներում միջոցներ են ձեռնարկվում նաև թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությունից ստացված եկամուտների օրինականացման կանխման ուղղությամբ: |
| | | **ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն** |
| | | **ՀՀ կենտրոնական բանկ**<br>2011 թվականի ընթացքում թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությունից ստացված եկամուտների օրինականացման կանխմանն ուղղված միջոցառումների անշեղ իրականացման ապահովման նպատակով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնը (այսուհետ՝ ՖԴԿ) շարունակել է դեռևս 2010 թվականին ձեռնարկված միջոցառումների իրականացումը: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ՖԴԿ կողմից |

| | | |
|---|---|---|
| | | մշակված ««Փողերիլվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասինե ՀՀ օրենքում, ինչպես նաև փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտը կարգավորող տասնվեց այլ օրենքներում փոփոխությունների և լրացումների կատարում նախատեսող օրենսդրական փաթեթը կարգավորման ազդեցության համապատասխան գնահատում ներանցնելուց հետո ներկայացվել է ՀՀ կառավարություն՝ օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու համար:<br>Թմրաբիզնեսից առաջացող եկամուտների օրինականացման դեպքերի բացահայտումն ու կանխարգելում նիրականացնող պետական իրավասու մարմինների միջև համագործակցության կատարելագործման տեսանկյունից կարևորվում է միասնական տեղեկատվական տիրույթի ստեղծման տեխնիկական առաջադրանքի հետ կապված աշխատանքների շարունակական իրականացումը: Այսպես, ՀՀ կենտրոնական բանկի ՖԴԿ կողմից մշակված և մասնակից գերատեսչությունների հետ համաձայնեցված ՄՏՏ ստեղծման տեխնիկական առաջադրանքը 2011 թվականի ընթացքում բերվել է ավարտուն տեսքի և բաց մրցույթի հայտարարման նպատակով ներկայացվել է միջազգային փորձագետների վերջնական գնահատմանը: Վերջնական գնահատումից հետո տեխնիկական առաջադրանքի նախագծման և ներդրման նպատակով հայտարարվել է մրցույթ, որի արդյունքների ամփոփումն ակնկալվում է 2012 թվականի հունվար ամսվա վերջում: |

<table>
<tr><th colspan="3"><u>Նպատակ 2.</u> Իրավասու մարմինների և կազմակերպությունների կարողությունների հզորացում և նրանց միջև համագործակցության ամրապնդում</th></tr>
<tr><td rowspan="3">5.2.1</td><td rowspan="3">Իրավապահ և իրավասու այլ պետական մարմինների նյութատեխնիկական և կադրային պատշաճ հագեցվածություն ապահովում</td><td>ՀՀ արդարադատության նախարարություն</td></tr>
<tr><td>ՀՀ առողջապահության նախարարություն</td></tr>
<tr><td>ՀՀ ոստիկանություն<br>Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի հարցերով միջգերատեսչական հանձնաժողովի կողմից թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարում օգտագործվող առկա նյութատեխնիկական բազայի վիճակի ուսումնասիրության և դրա վերազինման համար անհրաժեշտ տեխնիկական սարքավորումների և հատուկ վարժեցված շների պահանջարկի ուսումնասիրման ուղղությամբ 2011թ. սեպտեմբերի 30-ին ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ:<br>ՀՀ կառավարության 01.04.2010թ. թիվ 354-Ն որոշմամբ հաստատված <<Ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011 թվականների բարեփոխումների>> ծրագրի շրջանակներում ՀՀ ոստիկանության պետի 2011թ. օգոստոսի 19-ի թիվ 2213-Ա հրամանով ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ 4-րդ վարչության կառուցվածքում ստեղծվել է <<Օպերատիվ տեղեկատվության բաժանմունք>>՝ նպատակ ունենալով հանրապետությունում թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության կանոնակարգման ու դրանց ապօրինի շրջանառության հետ կապված ֆիզիկական եւ իրավաբանական անձանց</td></tr>
</table>

| | | |
|---|---|---|
| | | վերաբերյալ օպերատիվ տեղեկատվական-վերլուծական աշխատանքների, ինչպես նաև շահագրգիռ մարմիններից ստացված տեղեկատվության փոխանակման ապահովման իրականացումը: |
| | | **ՀՀ դատախազություն**<br>Կատարված ուսումնասիրություններն ու վերլուծությունները վկայում են նաև, որ վերջին տարիներին շատացել է սինթետիկ խմբին պատկանող թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը հատկապես երիտասարդության շրջանում, որոնք ապօրինի թմրամիջոցներ են ձեռք բերում և գործածում գիշերային ակումբներում և ժամանցի այլ վայրերում: Խնդրի լուծման կապակցությամբ ՀՀ դատախազության կոլեգիայի 2011 թվականի մարտի 30-ի նիստում որոշում է ընդունվել առաջարկել ՀՀ ոստիկանության պետին՝ ուժեղացնել հսկողությունը գիշերային ակումբներում և ժամանցի այլ վայրերում՝ այդ բնույթի հանցագործությունների նախականխման և բացահայտման ուղղությամբ, իսկ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահին՝ ուժեղացնել հսկողությունը մաքսային անցակետերում և վերազինել դրանք նոր սարքավորումներով:<br>Ի կատարումն ՀՀ դատախազության կոլեգիայի 2011 թվականի մարտի 30-ի նիստում ընդունված որոշման (արձանագրություն N02) 1-ին կետի՝ ՀՀ գլխավոր դատախազության թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների գործերով բաժնի կողմից համապատասխան միջնորդագրեր են ուղարկվել ՀՀ ոստիկանության պետին և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահին՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների նախականխման և բացահայտման ուղղությամբ |

| | | |
|---|---|---|
| | | անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկելու համար: |
| | | **ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն** |
| | | **ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե**<br>5.2.1 – ԱՊՀ անդամ երկրների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի իրավապահ ստորաբաժանումների ղեկավարների կոմիտեի շրջանակներում ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր ՌԴ մաքսային ակադեմիայի իրավապահ գործունեության ինստիտուտի հետ, համաձայն որի, ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաքսանենգության դեմ պայքարի և կրկնակի մաքսային հսկողության վարչության աշխատակիցները վերապատրաստման դասընթացներ կանցնեն նշված ԲՈՒՀ-ում: ԱՊՀ անդամ երկրների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի իրավապահ ստորաբաժանումների ղեկավարների կոմիտեի կազմում ստեղծվել է Թմրամիջոցների դեմ պայքարի պրոֆիլավորման միջգերատեսչական աշխատանքային «Նե, որում ընդգրկված է նաև ՀՀ ԿԱ ՊԵԿ ՄԴՊԿՄՀ վարչության աշխատակից: |
| **5.2. 2** | Նարկոլոգիական ծառայության արդիականացման և գիտական-տեղեկատվական պատշաճ | **ՀՀ առողջապահության նախարարություն**<br>5.2.2. կետի՝ 2010 թվականին նարկոլոգիական կլինիկային ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրվել է վերակենդանացման հավաքածու ու արհեստական շնչառության ապարատ: 2010 թվականին Բաց հասարակական ինստիտուտի օժանդակությամբ հիմնովին վերանորոգվել է մեթադոնային փոխարինող |

| | | |
|---|---|---|
| | հազեցվածությանը, ինչպես նաև թմրամոլության կանխարգելման և բուժման ոլորտում մասնագիտացված բժշկական հիմնարկների նյութատեխնիկական ներուժի ամրապնդման ապահովում | բուժման բաժանմունքը, 2011 թվականին ՄԱԿ-ի աջակցությամբ շահագործման է հանձնվել նոր կաթսայատուն:<br>2012 թվականին նախատեսված է 1 նարկոլոգիական բաժանմունքի վերանորոգում:Գիտական-տեղեկատվական պատշաճ հազեցվածությունն ապահովված Ռուսաստանի Դաշնության նարկոլոգիական ոլորտի 2 առաջատար պարբերականի բաժանորդագրմամբ, դրանց պատճենահանմամբ և բոլոր շահագրգիռ կողմերին տրամադրմամբ, ինչպես նաև www.antidrug.health.am կայքում տեղակայված և մշտապես թարմացվող նյութերով: |
| **5.2.3** | Իրավապահ մարմինների համակարգում գործող հատուկ ուսումնական հաստատությունների կազմում ստեղծել թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց | **ՀՀ ոստիկանություն**<br>ՀՀ ոստիկանությունը նպատակահարմար չի համարել ՀՀ ոստիկանության կրթահամալիրում նշված կետով նախատեսված ստորաբաժանման ստեղծումը, սակայն նշված խնդիրները ուսումնասիրելու նպատակով քննարկվում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական կազմից աշխատանքային խմբի ստեղծման հարցը: |
| | | **ՀՀ դատախազություն** |
| | | **ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն**<br>2011թ. ԱԱԾ Գիտաուսումնական կենտրոնում կազմավորվել է հատուկ կիրառական առարկաների ամբիոն, որը ի թիվս այլ |

| | | |
|---|---|---|
| | պրեկուրսորներ ի ապօրինի շրջանառության, թմրամոլության կանխարգելման հետ կապված հարցերն ուսումնասիրող ստորաբաժանումների ստեղծում | առարկաների, կդասավանդի թեմաներ թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության, թմրամոլության կանխարգելման վերաբերյալ:<br>2010թ. հուլիսի 15-ի ՀՀ Կառավարության թիվ 892-Ն որոշմամբ հաստատված «2010/2012թ.թ. ընթացքում ՀՀ-ում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ծրագրով նախատեսված միջոցառումներիե ժամանակացույցով ներկայացված «թմրամոլության կանխարգելումը զինծառայողների շրջանումե ենթակետով նշված միջոցառումների շրջանակներում 2011թ. ընթացքում ձեռնարկված միջոցառումների արդյունքում ստացվել են տվյալներ 16 սպաների, 8 ենթասպաների, 12 պայմանագրային և 18 ժամկետային զինծառայողների կողմից թմրանյութ օգտագործելու ու տարածելու վերաբերյալ, որոնց մասին իրազեկվել է ՀՀ պաշտպանության նախարարը, իսկ առանձին դեպքերում՝ տեղեկատվությունը փոխանցվել ՊՆ ռազմական ոստիկանությանը:<br>Բացի այդ, ԱԱԾ և ՊՆ ռազմական ոստիկանության միջև առկա համագործակցության պլանների շրջանակներում, զորամասերի հրամանատարության, այդ թվում՝ անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով հրամանատարների տեղակալների մասնակցությամբ, զինծառայողների շրջանում, համատեղ իրականացվել են պրոֆիլակտիկ-դաստիարակչական բնույթի բացատրական աշխատանքներ՝ թմրամոլության կանխարգելման նպատակով:<br>Նշված համագործակցության շրջանակներում աշխատանքներ են տարվել նաև զորամասերի հարակից տարածքներում թմրանյութ պարունակող տարբեր տեսակի բույսերի հայտնաբերման և ոչնչացման |

| | | |
|---|---|---|
| | | ուղղությամբ։<br>Իրականացվել են համապատասխան միջոցառումներ, ուղղված ՀՀ ԶՈՒ կենտրոնական կլինիկական և կայազորային հոսպիտալներում, ինչպես նաև զորամասերի բուժկետերում թմրանյութ հանդիսացող և հոգեմետ դեղամիջոցների պահպանման, բաշխման ու օգտագործման կարգում առկա խախտումների, թերությունների բացահայտմանը, ինչի արդյունքում ուշադրության արժանի տեղեկատվություններով իրազեկվել է ՀՀ պաշտպանության նախարարը։ Աշխատանքներն այդ ուղղությամբ շարունակվում են։ |
| | | **ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե**<br>5.2.3 – ՊԵԿ Ուսումնական կենտրոնում նախատեսվում է կազմակերպել թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կանխարգելման ուսումնական ծրագիր։ |
| **5.2.4** | Հայաստանի Հանրապետությ ան տարածքում հսկողության տակ գտնվող թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ու դրանց | **ՀՀ առողջապահության նախարարություն**<br>5.2.4. կետի՝ ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակվել 010թ. դեկտեմբերի 9-ի ՀՀ կառավարության N 1646-Ն որոշմամբ լրացումներ են կատարվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 21-ի թիվ 1129-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության հսկման ենթակա թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների N 3 ցուցակումե: Վերոհիշյալ ցանկում ընդգրկվել են «Թիանեպտինե, «Տրոպիկամիդե, «Պրեգաբալինե և «Սեդալգինե՝ պարացետամոլ, |

| | | |
|---|---|---|
| | պրեկուրսորներ ի ցանկերի և ցուցակների կազմման սկզբունքների, կառուցվածքի ու դրանցում ներառվելիք՝ ապօրինի շրջանառության մեջ հայտնաբերված թմրամիջոցների մանաչափերի վերաբերյալ առաջարկություններ մշակելու ուղղությամբ աշխատանքների ակտիվացում | մետամիզոլ (մետամիզոլի նատրիումական աղ), կոֆեին, ֆենոբարբիտալ, կոդեին ֆոսֆատե դեղերը: Համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 10.03.2011թ. թիվ 370-Ա հրամանի ստեղծվել է աշխատանքային խումբ ՀՀ «Քրեական օրենսգրքումե, 2010թ. դեկտեմբերի 9-ի ՀՀ կառավարության N 1646-ն և 2003 թվականի օգոստոսի 21-ի թիվ 1129-Ն որոշումների մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու նպատակով: Աշխատանքները ընթացքի մեջ են: |
| **5.2.5** | Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորներ | **ՀՀ ոստիկանություն**<br>ՀՀ-ում իրավապահ մարմինների և շահագրգիռ այլ պետական մարմինների տվյալների բազաները մեկ միջավայրում ինտեգրելու, միասնական տեղեկատվական համակարգ ստեղծելու նպատակով կազմվել է նշված համակարգի տեխնիկական առաջադրանքը և |

| | | |
|---|---|---|
| | ի ապօրինի շրջանառության հետ կապված իրավախախտումների, նման գործունեության ն առնչվող ֆիզիկական և իրավաբանական անձանց վերաբերյալ օպերատիվ տեղեկատվական-վերլուծական համակարգի ներդրման և համապատասխան մարմինների հետ ստացված տեղեկատվության փոխանակման ապահովում | անհրաժեշտ տեխնիկական և ֆինանսական միջոցների ցանկի նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարություն: |
| | | **ՀՀ դատախազություն** |
| | | **ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն** |
| | | **ՀՀ արդարադատության նախարարություն** |
| | | **ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե**<br>5.2.5 - Հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված իրավախախտումների, նման գործունեությանն առնչվող ֆիզիկական և իրավաբանական անձանց վերաբերյալ կուտակվում են տեղեկություններ՝ վերլուծական աշխատանքներ իրականացնելու համար: |
| **6. Միջազգային համագործակցությունը** | | |
| **6.1** | Հայաստանի | **ՀՀ արտաքին գործերի նախարարություն** |

| | | |
|---|---|---|
| | Հանրապետության կառավարության և ՄԱԶԾ-ի միջև համագործակցության շարունակում Հարավային Կովկասում թմրամիջոցների հակազդման ծրագրի հետագա իրականացման ուղղությամբ | |
| **6.2** | Թմրամոլության և թմրամիջոց-ների ապօրինի շրջանառության դեմ պայքարի կազմակերպման նպատակով Հայաստանի Հան- | **ՀՀ արտաքին գործերի նախարարություն** |

| | | |
|---|---|---|
| | րապետությունում հավատարմագրված միջազգային կազմակերպությունների հետ լայն համագործակցության ապահովում | |
| **6.3** | Օտարերկրյա իրավապահ մարմինների ու մասնագիտացված միջազգային կազմակերպությունների (Ինտերպոլ, Եվրապոլ) հետ համագործակցության ընդլայնում եւ բարելավում | **ՀՀ դատախազություն**<br>Միջոցառումները ընթացքի մեջ են, չնայած որ համագործակցությունը ՀՀ-ում Ինտերպոլի ազգային բյուրոյի հետ իրականացվում է մշտապես:<br>Միևնույն ժամանակ, նպատակահարմար ենք գտնում նշել, որ թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների դեմ պայքարի բնագավառում ՀՀ դատախազությունը բազմաթիվ խնդիրներ է լուծել ՀՀ դատախազության կոլեգիայի կողմից ընդունված որոշումների իրագործմամբ:<br>Այսպես, դեռևս ՀՀ դատախազության կոլեգիայի 2008թ. հոկտեմբերի 31-ի նիստում որոշում է ընդունվել դատախազական հսկողության առաջնահերթ խնդիր համարել թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացումը, հանցագործության դեպքերի և դրանց բոլոր մասնակիցների բացահայտումը՝ հատուկ կարևորելով թմրամիջոցների ձեռքբերման աղբյուրների, ներկրողների, իրացնողների և |

| | | |
|---|---|---|
| | | օգտագործողների հանցավոր կապերի պարզումը: ՀՀ դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին հանձնարարվել է համապատասխան հետևողականություն դրսևորել թմրամիջոցների, հոգեմետ նյութերի, դրանց համարժեքների և պրեկուրսորների ձեռք բերման աղբյուրները բացահայտելու գործում, իսկ դրանց չբացահայտվելու դեպքում քրեական գործի վերջնական ընթացքը լուծել և վերջնական որոշում կայացնել, այդ թվում նաև դատարան ուղարկված քրեական գործերով արագացված դատական քննություն կիրառելու համաձայնություն տալ ՀՀ գլխավոր դատախազին կամ համապատասխան ոլորտը համակարգող նրա տեղակալին զեկուցելուց հետո: Կոլեգիայի նույն որոշմամբ արձանագրվել է նաև, որ անհրաժեշտ է գործնական բոլոր միջոցները ձեռնարկել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի պահանջները պահպանելու ուղղությամբ, այն հաշվով, որ քրեական գործերից գործի մաս (քրեական գործ) պետք է անջատել միայն այն դեպքում, երբ սպառվել են թմրամիջոցների ձեռք բերման աղբյուրը բացահայտելուն ուղղված բոլոր միջոցառումները:<br>Բացի այդ, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերի քննության բազմակողմանիությունն ապահովելու նկատառումներից ելնելով՝ ՀՀ դատախազության կոլեգիայի 2010թ. օգոստոսի 6-ի նիստում որոշում է ընդունվել թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների հետ կապված այն քրեական գործերով, որոնցով թմրամիջոցների, հոգեմետ նյութերի, դրանց համարժեքների և պրեկուրսորների ձեռք բերման աղբյուրը պարզելու նպատակով տվյալ քրեական գործի նյութերով հարուցվել և առանձին վարույթում կասեցվել է |

| | | |
|---|---|---|
| | | մեկ այլ քրեական գործ, ապա մեղադրանքը պաշտպանող դատախազների կողմից պատժի միջնորդության ժամանակ իրեղեն ապացույց հանդիսացող թմրամիջոցների, հոգեմետ նյութերի, դրանց համարժեքների և պրեկուրսորների ոչնչացման միջնորդություն դատարանին չներկայացնել՝ հետագայում համապատասխան փորձաքննությամբ հիշյալ իրեղեն ապացույցների համեմատական հետազոտություն անցկացնելու համար:<br>2010 թվականին ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը ՀՀ կառավարության կողմից ստորագրել է 2001թ. հունիսի 11-ին ՀՀ և ԱՄՆ կառավարությունների միջև կնքված թմրադեղերի հսկողության և իրավապահ ոլորտում համագործակցության նամակ-համաձայնագրում 11-րդ փոփոխությունը կատարելու մասին արձանագրությունը, որի համաձայն ԱՄՆ կառավարության կողմից լրացուցիչ ֆինանսավորում է տրամադրվել մշտական իրավախորհրդատուի, մարդկանց առևտրի (թրաֆիքինգի) դեմ պայքար, Փրոջեքթ Հարմոնիի ԶԱՆԳ, Ամերիկյան փաստաբանների ընկերակցության իրավունքի գերակայության նախաձեռնության (ԱՓԸ/ԻԳՆ) քրեական իրավունքի բարեփոխումների, իրավապահ ոլորտի զարգացում, ֆինանսական դիտարկումների կենտրոնի զարգացում և քրեափորձագիտական ինստիտուտի զարգացում ծրագրերի համար: Ինչպես երևում է այս արձանագրությունից, ԱՄՆ կառավարությունը, թերևս, 2010 թվականի ընթացքում թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների դեմ պայքարի միջոցառումների ֆինան-սավորում չի նախատեսել: |
| | | **ՀՀ ոստիկանություն** |

| | | |
|---|---|---|
| | | ՀՀ-ում Ինտերպոլի ԱԿԲ-ին է տրամադրվել ՀՀ-ում իրավապահ մարմինների կողմից 2009-2010թթ. ընթացքում թմրամոլության, թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության դեմ տարվող պայքարի ուղղությամբ կատարված աշխատանքների և արդյունքների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն /հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով/:<br>Թմրանյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարը ընդլայնելու, ուժեղացնելու և բարելավելու նպատակով իրականացվող միջոցառումների կազմակերպման ու անցկացման վերաբերյալ Ինտերպոլի Գլխավոր քարտուղարության և անդամ երկրների կողմից պարբերաբար տրամադրվող մեթոդական և վերլուծական տեղեկատվությունը, այդ թվում Ինտերպոլի Պանգեա օպերացիայի 4-րդ փուլի շրջանակներում կեղծ դեղամիջոցների հայտնաբերման և առգրավման վերաբերյալ իրականացված աշխատանքների մասին տեղեկանքները ՀՀ-ում Ինտերպոլի ԱԿԲ-ի կողմից փոխանցվում և շարունակվում է փոխանցվել ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ:<br>Օպերատիվ ամփոփագրերի հետևողականության արդյունքում ՀՀ-ում Ինտերպոլի ԱԿԲ-ի կողմից 2011թ. ընթացքում կազմվել և Գլխավոր քարտուղարություն ու անդամ երկրներին են տրամադրվել թվով 3 ST հաղորդագրություններ ՀՀ տարածքում թմրանյութերի խոշոր քանակների ապօրինի շրջանառաության դեպքերի բացահայտման փաստերով, իսկ անդամ երկրներից ստացված նույնատիպ 21 հաղորդագրություններ, որոնցում առկա են տեղեկություններ ՀՀ քաղաքացիների մասին, տրամադրվել են ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ վարչությանը՝ դրանցում նշված անձանց նկատմամբ ստուգումներ կատարելու, հաշվառելու և |

| | | |
|---|---|---|
| | | հաշվառումներով անցնելու դեպքում տեղեկատվություն տրամադրելու նպատակով: |
| | | **ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն** |
| **7. Մոնիտորինգը և գնահատումը** | | |
| **7.1** | Թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ծրագրի իրականացման պարբերական մոնիտորինգի և գնահատման ապահովում | **ՀՀ ոստիկանություն**<br>ՀՀ ոստիկանությունը շահագրգիռ գերատեսչությունների հետ պարբերաբար գրագրությունների և իրավասու պաշտոնատար անձանց հանդիպումների միջոցով իրականացրել է թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ծրագրի իրականացման պարբերական մոնիտորինգի իրականացում՝ ապահովելով անհրաժեշտ տեղեկությունների ստացումը և տրամադրումը, ինչպես նաև կատարված աշխատանքներով արդյունքների գնահատումը: |
| **7.2** | Ապահովել ծրագրի մոնիտորինգի և գնահատման տարեկան արդյունքների | **ՀՀ ոստիկանություն**<br>Ազգային ծրագրի ժամանակացույցի 7.2 կետի պահանջների համաձայն, ՀՀ ոստիկանության պետի 2011թ. հունվարի 12-ի թիվ 29/4-40 գրությամբ ժամանակացույցով նախատեսված 2010-2011 թվականների ընթացքում իրականացված միջոցառումների արդյունքների վերաբերյալ տեղեկանքը յուրաքանչյուր կիսամյակ ներկայացվել է ՀՀ ԱԱԽ քարտուղարին: |

| | | |
|---|---|---|
| | ամփոփման և հրապարակման ապահովում | Նշված միջոցառումների արդյունքները ՀՀ ոստիկանության ՀԿԼ վարչության միջոցով հրապարակվել և լուսաբանվել են: |
| **8. Կառավարումը, համակարգումը, համագործակցությունը և ֆինանսավորումը** | | |
| **8.1** | Սույն ժամանակացույցով իրականացվող միջոցառումներ ի ընդհանուր համակարգման ապահովում | **ՀՀ ոստիկանություն**<br>Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հուլիսի 15-ի թիվ 892-Ն որոշմամբ հաստատված <<2010-2012 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության եւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ծրագրով նախատեսված միջոցառումների ժամանակացույցի>> ՀՀ ոստիկանության պետի 2010 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ 2712-Ա հրամանով հաստատվել է Հայաստանի Հանրապետության ոստիկանության գործունեության ոլորտին վերաբերող միջոցառումների ցանկը, որի ժամանակին կատարման հսկողությունը և ծրագրային միջոցառումների իրականացման աշխատանքների համակարգումը դրվել է ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ Գլխավոր վարչության պետի վրա:<br>Ազգային ծրագրի ժամանակացույցով նախատեսված միջոցառումների համակարգված իրականացման համար ՀՀ շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների ղեկավարներին է ուղարկվել ՀՀ ոստիկանության պետի 2011թ. հունվարի 12-ի թիվ 29/4-60 գրությունը՝ իրենց ենթակա պետական կառավարման մարմնում նշանակելու ծրագրի կատարման պատասխանատու, որը կիրականացնի գերատեսչության կողմից ծրագրային միջոցառումների կատարման |

| | | |
|---|---|---|
| | | համակարգումը:<br>Ելնելով աշխատանքների ծանրաբեռնվածությունից և ազգային ծրագրի ժամանակացույցով նախատեսված միջոցառումների կատարումն ապահովելու նպատակով ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ պետի 2011թ. մարտի 3-ի թիվ 35-Ա հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ, որի ղեկավար է նշանակվել ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ թմրաբիզնեսի և թրաֆիքինգի դեմ պայքարի վարչության պետը:<br>Միջգերատեսչական հանձնաժողովի նիստի թիվ 1 արձանագրության 5-րդ կետով նախատեսված միջոցառման կատարման վերաբերյալ ՀՀ ոստիկանության պետի առաջին տեղակալի 2011թ. մարտի 3-ի թիվ 29/4-992 գրությամբ ամփոփ տեղեկանք է ներկայացվել ՀՀ ԱԱԽ աշխատակազմի ղեկավարին:<br>Ազգային ծրագրի ժամանակացույցով և ՀՀ ոստիկանության պետի 2010թ. դեկտեմբերի 1-ի թիվ 2712-Ն հրամանով նախատեսված ՀՀ ոստիկանության մասով միջոցառումների կատարման վերաբերյալ հսկողություն իրականացնելու նպատակով ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ պետի 2011թ. մարտի 12-ի թիվ 29/1-1-913 գրությամբ ՀՀ ոստիկանության ստորաբաժանումներից խնդրվել է յուրաքանչյուր եռամսյակ ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ ներկայացնել իրենց ստորաբաժանման մասով նախատեսված միջոցառումների իրականացման վերաբերյալ տեղեկանքներ՝ ամփոփելու եւ ՀՀ ոստիկանության ղեկավարությանը ներկայացնելու համար:<br>Ազգային ծրագրի ժամանակացույցով նախատեսված 2011թ. 1-ին կիսամյակի ընթացքում միջոցառումների կատարման արդյունքները ամփոփելու նպատակով ՀՀ ոստիկանության պետի 2011թ. հունիսի 15-ի |

| | | |
|---|---|---|
| | | թիվ 29/1-2551 գրությամբ գերատեսչությունների ղեկավարներից խնդրվել է ներկայացնեն իրենց ղեկավարած համակարգի մասով ներկայացնել տեղեկանք՝ ամփոփելու և ՀՀ ԱԱԽ աշխատակազմ ներկայացնելու համար:<br>ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ պետի 2011թ. հունիսի 14-ի թիվ 29/1-2529 գրությամբ նույնաբովանդակ տեղեկանք է խնդրվել ներկայացնել ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ՝ ամփոփելու եւ ՀՀ ոստիկանության պետին ու ՀՀ ԱԱԽ աշխատակազմ ներկայացնելու համար: Նշված տեղեկությունները 2011թ. 1-ին կիսամյակի արդյունքներով ամփոփվել և ՀՀ ոստիկանության պետի առաջին տեղակալի 2011թ. հուլիսի 20-ի թիվ 29/1-1-3085 գրությամբ ուղարկվել է ՀՀ ԱԱԽ քարտուղարին:<br><<Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության եւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի հարցերով միջգերատեսչական հանձնաժողովի 2011թ. սեպտեմբերի 30-ի օրակարգի երկրորդ հարցի երկրորդ կետի պահանջների համաձայն, 2011թ. նոյեմբերի 23-ին ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ վարչական շենքում կայացավ թմրամոլության եւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարում օգտագործվող առկա նյութատեխնիկական բազայի վիճակի և դրա վերազինման համար անհրաժեշտ տեխնիկական սարքավորումների և հատուկ վարժեցված շների պահանջարկի ուսումնասիրման աշխատանքային խմբի նիստը, որի ժամանակ որոշվեց մշակել <<թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարում օգտագործվող առկա նյութատեխնիկական բազայի վիճակի և դրա վերազինման համար անհրաժեշտ տեխնիկական սարքավորումների և հատուկ վարժեցված շների պահանջարկի |

| | | |
|---|---|---|
| | | ուսումնասիրման>> ծրագրի նախագիծ և ներկայացնել միջգերատեսչական հանձնաժողովի անդամներին՝ կարծիք ստանալու համար:<br>Ծրագրի նախագծի լրամշակված տարբերակը 14.12.2011թ. թիվ 29/4-5145 գրությամբ ներկայացվել է ՀՀ ԱԱԽ՝ միջգերատեսչական հանձնաժողովի հաստատմանը: |
| **8.2** | Դոնորների ազգային համաժողովի կազմակերպում և անցկացում | **ՀՀ ոստիկանություն**<br>ՀՀ ոստիկանության և ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության համագործակցության շրջանակներում ԱՄՆ-ի կառավարության կողմից ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ ԳՎ թմրաբիզնեսի և թրաֆիքինգի դեմ պայքարի վարչությանը տրամադրվել է՝<br>• համակարգիչ – 20 հատ<br>• դյուրակիր համակարգիչ – 2 հատ<br>• լազերային տպիչ – 5 հատ<br>• սկաներ – 1 հատ<br>• ֆոտոխցիկ – 2 հատ<br>• տեսախցիկ – 2 հատ<br>• ֆաքս – 1 հատ<br>• կրիչ 32GB – 15 հատ<br>• կրիչ 500GB – 1 հատ |
| **8.3** | Հասարակական ոլորտի ներուժի զարգացում՝ ֆինանսական | **ՀՀ ոստիկանություն** |

| | | |
|---|---|---|
| | միջոցների հավաքագրման ուղղությամբ | |
| **8.4** | Կառուցակարգերի մշակում եւ ներդնում, որոնք կապահովեն տարբեր մարմինների և կազմակերպությունների կողմից սույն ժամանակացույցով նախատեսված միջոցառումների համակարգված իրականացումը | **ՀՀ ոստիկանություն**<br>Հանրապետությունում թմրաբիզնեսի և թմրամոլության դեմ պայքարն ուժեղացնելու, դրա արդյունավետությունը բարձրացնելու, նշված բնագավառում գործադիր իշխանության մարմինների ու կազմակերպությունների ջանքերն ու հնարավորությունները առավելագույնս օգտագործելու, այդ աշխատանքները համակարգելու, ինչպես նաև թմրամոլության դեմ մղվող պայքարում հանրապետության միջազգային պարտավորությունների կատարումն ապահովելու, թմրաբիզնեսի և թմրամոլության դեմ պայքարի ծրագրերի մշակման ու իրականացման գործում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների աշխատանքների համադրման կազմակերպական ապահովման նպատակով, ՀՀ Նախագահի 1993 թվականի դեկտեմբերի 21-ի հրամանագրով ստեղծվել է Թմրաբիզնեսի և թմրամոլության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողով՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի ղեկավարությամբ:<br>ՀՀ կառավարության 14.02.1994թ. թիվ 76 որոշմամբ հաստատվել է թմրաբիզնեսի եւ թմրամոլության դեմ պայքարի պետական միջգերատեսչական հանձնաժողովի կանոնադրությունը:<br>ՀՀ կառավարության 22.05.1996թ. թիվ 303 որոշմամբ հաստատվել է թմրաբիզնեսի եւ թմրամոլության դեմ պայքարն ուժեղացնելու միջոցառումների եւ անչափահասների հետ տարվող աշխատանքների |

| | | |
|---|---|---|
| | | պետական միջգերատեսչական հանձնաժողովի կազմը:<br>ՀՀ Նախագահի 10.11.1998թ. թիվ ՆՀ-140 հրամանագրով փոփոխություն է կատարվել հանձնաժողովի վերնագրում եւ վերանվանվել որպես թմրաբիզնեսի եւ թմրամոլության դեմ պայքարի պետական միջգերատեսչական հանձնաժողով:<br>Ղեկավարվելով «Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի /թմրամիջոցների ու հոգեմետ նյութերի շրջանառության և ապօրինի շրջանառության կանխարգելման բնագավառում պետական լիազորված մարմինների կողմից համաձայնեցված գործունեության նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կարող է ստեղծվել միջգերատեսչական հանձնաժողով: Հանձնաժողովի աշխատակարգը և հիմնական խնդիրները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը/ պահանջներով ու Հայաստանի Հանրապետությունում թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի շրջանառության նկատմամբ հսկողությունն ուժեղացնելու, ապօրինի շրջանառության դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելու, կանխարգելման բնագավառում պետական լիազորված մարմինների կողմից իրականացվող գործունեությունը համակարգելու, ինչպես նաև թմրամիջոցների ու հոգեներգործուն նյութերի շրջանառության նկատմամբ հսկողության և ապօրինի շրջանառության դեմ պայքարում Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 27.11.2003թ. թիվ 1714-Ն որոշմամբ ստեղծվել է Հայաստանի Հանրապետությունում թմրամիջոցների և հոգեներգործուն |

| | | |
|---|---|---|
| | | նյութերի շրջանառության ու ապօրինի շրջանառության կանխարգելման միջգերատեսչական հանձնաժողով՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի ղեկավարությամբ:<br>ՀՀ կառավարության 13.05.2004թ. թիվ 725-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ-ում թմրամիջոցների եւ հոգեներգործուն նյութերի շրջանառության կանոնակարգման ու ապօրինի շրջանառության կանխարգելման միջգերատեսչական հանձնաժողովի աշխատակարգը:<br>Ներկայումս ՀՀ ոստիկանության ղեկավարության կողմից միջոցներ են ձեռնարկվում 2012 թվականից վերոհիշյալ հանձնաժողովի աշխատանքները վերսկսելու ուղղությամբ: |